

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

DEGHEGADOU

ديغيجادو

Հրատարակութիւն Գահիրէի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ	1
Մ. Երամեան	
ՈՒՇԱԳՐԱՄ ԵՒ ԿՐԿԱԿԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՄԸ	2
ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան	
ԱՌԱՋԻՆ ՅԱԶՈՐՈՒԹԻՒՆ	5
Մ. Ե.	
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	6
ՍԱՐՈՒԽԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԿՈԿԱՆԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԵՋ	7
Հրանդ Բէշիշեան	
ՆՈՐԱՓԹԻԹ ՏԱՂԱՆԴԻ ՄԸ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ	8
«Տ»	
ՕԳՆԵՆՔ ԱՐՑԱԽԻՆ	9
ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԻՒՆ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՅՍՕՐ	10
ԶՐՈՅՑ ԵՐԵՄՆԻ ՀԲԸՄ-Ի ԿԵԴՐՈՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՏՆՕՐԷՆՈՒԴԻՆ ԴԱԼԱՐ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ ՀԵՏ	12
«Տ»	
ՀԲԸՄ-Ի ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ	19
ՇԱՄ-ԷԼ-ՆԵՍԻՍԸ ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ ՄԵՋ	20
Սօսի Ներքետեան Յակոբեան	
ՃԱՏՐԱԿԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ ՄԸ ԿՈԿԱՆԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԵՋ	21
ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան	
ՇԱՀԵԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ	22
Սօսի Ներքետեան Յակոբեան	
ԱՐԵՍԱՆԴՐԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՊԱՍՔԵԹ ՊՈԼԻ ՏԱՐԵԿԱՆ ՍՐՑԱՇԱՐՔԸ՝	24
Սօսի Ներքետեան Յակոբեան	
ԱՐԵՍԱՆԴՐԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՍԿԱՌՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՔԵՐՄԵՍԸ	25
ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան	
ՍՐԲՈՐԻ ԹԵՐԵԶԱ ԱԿՈՒՄԲԸ ԿԸ ՊԱՏՈՒԷ ՀՀՀ-ՀԲԸՄ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ Ա. ՇՐՋԱՆԻ ՇՐՋԱՆԱԽԱՐՏՆԵՐԸ	26
ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան	
ՄԱՀ ԵՒ ՅՈՒՐԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԷԼՍԻ ՊԷՅԼԵՐԵԱՆԻ	27
«Տ»	
ՄԱՀ ԵՒ ՅՈՒՐԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՄ ԹՐԱՅԵԱՆԻ	28
«Տ»	

ԽՄԲԱԳԻՐ
Մարուշ Երամեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ
Պերճ Թերզեան

ՍՐԱԳՐԻԶ
ՎԵՐՍՏՈՒԳԻԶ
Անայիս Ճիգմեճեան

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ՁԵՒԱԽՈՐՈՒՄ
Շահէ Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing Press

Գահիրեի ՀԲԸՄ-ի
լուրերուն հետեւեցէք
www.agbuegypt.com
կայքէջով:

Ծանօթացէք «Հայաստան
էւ Հայերը Արաբական
Մամուլին մէջ. 1876-1923»
կայքէջի նիւթերուն
www.arminmedia.com
հասցեով:

Թիւ 80 Նոր Շրջան
ՅՈՒԼԻՍ 2016

«ՏԵՂԵԿԱՏՈՒ»ի ներկայ թիւին հետ
կը բաժնուի Տիար Պերճ Թերզեանի
«ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻՒՍԵԱՆ
ԴԱՍՏՈՒԽԱՐԱԿ-ՏՆՕՐԷՆ»
խորագիրը կրող առանձին
գրքոյկ-յաւելումով:



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Տարի մը առաջ՝ 2015-ին կը մասնակցեի Հայկազեան Համալսարանի (Պէյրուք, Լիբանան) կազմակերպած համագումարին, որ նուիրուած էր սուրիահայ գաղութին:

Բազմաթիւ մասնակցողներուն մէջ կար նաեւ ... ճաբոնցի մը, որ գիտակ էր 18րդ դարու Հալէպի կեանքին եւ անոր մէջ կարելորդեր ունեցած հայ համայնքին:

Այդ համագումարի զեկոյցներուն մեծամասնութիւնը նուիրուած էր անցեալին, պրպտումներու եւ ուսումնասիրութիւններու միջոցով կը ներկայացուէր կեանքը Հալէպի մէջ, Հալէպի հայերուն համար:

Տարիներ կամ դարեր վերջ հաւանաբար ուրիշ գիտաժողովներ նուիրուին մե՛ր ժամանակներուն, մե՛ր ապրած կեանքին, ու թերեւս անոնց պրպտումներուն արդիւնքը ճշգրիտ չըլլայ, եթէ ...

Եթէ այսօր մենք չարձանագրենք մեր ապրած կեանքը իր վերիվայրումներով եւ մանրամասնութիւններով: Եւ ո՛ր արձանագրութեան աւելի յարմար վայր, քան մամուլը:

Սփիւռքի մամուլին իւրաքանչիւր անդամը, ինչ բնոյթի ալ ըլլայ՝ կուսակցական օրկան, մշակութային-գեղարուեստական թէ գրական, ունի կարելորդ դեր մը, որ հասարակ յայտարարն է բոլորին՝ ըլլալ մեր նոր պատմութեան տոմարը, ուր պիտի արձանագրուին դէպքերը, ժամանակաշրջանի մը եւ տարածաշրջանի մը մտածելակերպը:

Թէ ինչո՞ւ կարելորդ են այս երկուքը, ընթերցողին կը մնայ ճշդել:

Այս առումով իր փոքր, բայց կարելորդ լուսման բերող եռամսեայ հանդէս մըն է ՀԲԸՄ-ի Գահիրէի մասնաճիւղի «Տեղեկատու»ն, որ ներկայ թիւով կ'ամբողջացնէ իր նոր շրջանի քսան տարիները եւ 80րդ թիւը:

«Տեղեկատու»ն սկսած է լոյս տեսնել 1956-ին, որպէս երկամսեայ, ապա եռամսեայ եւ տեսած մինչեւ 1981: Այս շրջանին հանդէսին պարբերականութիւնը փոխուած ու դարձած է երբեմն քառամսեայ, վեցամսեայ կամ տարեկան: Խմբագիրները եղած են Սիսակ Շալճեան, Հայկ Ժամկոչեան, Գրիգոր Պասմաճեան եւ Տիգրան Գեորգեան (Մայիսէն մինչեւ Դեկտեմբեր 1981), որմէ ետք հանդէսը դադրած է, ապա վերսկսած՝ 1996-ին: Նոր շրջանին անոր պարբերականութիւնը

կանոնաւորուած է եւ դարձած եռամսեայ:

«Տեղեկատու»ի առաջին շրջանին, պարբերաթերթին արտօնատերը եղած է Ալեքսանտր Սարուխան մինչեւ իր շիջումը (Յունուար 1977), որմէ ետք արտօնատիրութիւնը յանձնուած է Յակոբ Համբիկեանի, մինչեւ պարբերականին դադրեցումը, 1981:

Յետագային մամուլյ օրէնքը բարեփոխուելով արտօնատերի հարց չէ մնացած, իսկ հրատարակութեան պատասխանատուն Սիւրբեան վարչութիւնն է մինչեւ օրս:

Իր կեանքի վերջին քսան տարիներուն (նոր շրջան), տարբեր խմբագիրներ իրենց լաւագոյնը տուած են «Տեղեկատու»ին: Այս լաւագոյնը անշուշտ կը տարբերի մէկ խմբագիրէն միւսը, երբեմն շեշտը կը դրուի իմացական ոլորտին, ուրիշ պարագաներու՝ հայ ոգին վրայ, եւ այսպէս:

«Տեղեկատու»ն նոր շրջանի իր խմբագիրներու կողքին ունեցած է խմբագրական խորհրդատու մը յանձին Պերճ Թերզեանի, որ եղած է նաեւ այս շրջանի առաջին պատասխանատու խմբագիրը:

Տարիներու ընթացքին խմբագիրները փոխուած են, սակայն Թերզեան հոգատար եղբօր մը խինդով եւ խանդով հետեւած է հանդէսին, որպէսզի անոր իւրաքանչիւր երեւումը ըլլայ կատարեալ, կամ՝ ըլլայ մօտ կատարեալին:

Այս շրջանին պատասխանատու խմբագիրներ եղած են.

Պերճ Թերզեան	1996-1998
Հրէի Չէճճէնեան (խմբագիր)	1996-2000
Տիգրան Գեորգեան	1999-2002
Արաքսի Տեօվլէթեան	2002-2011
Շաքէ Մարգարեան-Արթիսեան	2011-2016

Նոր տասնամեակի մը շեմին յարատեւութիւն կը մաղթենք «Տեղեկատու»ին, կը մաղթենք մանաւանդ որ Հայաստանն ու հայաշխարհը նուազագոյն վնասներով շրջանցեն համաշխարհային տագնապի այս շատ դժուար ժամանակը, շարունակելու համար իրենց բարգաւաճ կեանքը, Հայաստանի թէ սփիւռքի տարածքին, հայ լեզուն եւ մշակոյթը պահելու, աւելին՝ հարստացնելու ի խնդիր:

Մ. Երամեան



ՈՒՇԱԳՐԱԴ ԵՒ ԿՐԿՆԱԿԻ ՇՆՈՐՀԱՆԳԻԷՍ ՄԸ

Շաբաթ 7 Մայիս 2016-ին, Գահիրեի ԶԲԸՄ-ը ուշագրաւ երեկոյթ մը կազմակերպած էր Զելիոպոլսոյ Պըլըքտանեան հանդիսասրահին մէջ, երկու կարեւոր աշխատասիրութիւններու եւ անոնց հետ աղերս ունեցող նոր կայքէջի մը շնորհանդեսին առիթով: Առաջինը՝ արաբերէն թարգմանութիւնն էր Դոկտ. Ռէյմոն Գեորգեանի «Հայկական Ցեղասպանութիւնը» ծաւալուն երկին, իսկ երկրորդը՝ առաջին հատորը ընդարձակ ուսումնասիրութեան մը՝ «Հայաստան եւ հայերը Արաբական Մամուլին մէջ. 1876-1923»:

Ներկայ էին Եգիպտահայոց Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տէր Աշոտ Եպս. Մաացականեան, հայ կաթողիկէ համայնքի վիճակաւոր Գերպ. Գրիգոր Օգոստինոս Գուսան, Զոգշ. Տ. Գաբրիէլ վրդ. Սարգսեան, Արժ. Տ. Յակոբ Բիւյ. Յակոբեան եւ երեցիկներ, Եգիպտոսի մօտ Հայաստանի Հանրապետութեան Արտակարգ եւ լիազօր դեսպան Դոկտ. Արմէն Մելքոնեան, Գահիրեի Թեմական եւ Քաղաքական Ժողովներու ատենապետներ՝ Տիար Նուպար Սիմոնեան եւ Տոքթ. Գեորգ Երզնկացեան, ինչպէս նաեւ ատենապետներ եւ անդամներ հայկական զանազան միութիւններու: Ներկայ էին նաեւ եգիպտացի երեւելիներ՝ ծանօթ մտաւորական եւ քաղաքագետ Դոկտ. Մուսթաֆա Էլ Ֆիքքի, մշակոյթի նախկին նախարար



Դոկտ. Մոհամետ Սապրի, ինչպէս նաեւ եգիպտացի լրագրողներ եւ հեռատեսիլի «Dream» կայանի ներկայացուցիչներ:

Թերեւ հիւրասիրութենէ մը ետք, երեկոյթը սկսաւ Գահիրեի ԶԲԸՄ-ի Վարչութեան ատենապետ Տոքթ. Վիգէն Ճիգմէճեանի բարի գալուստի խօսքով: Ան արտայայտելեցաւ օրուան հանդիսութեան կարեւորութեան մասին, շեշտելով վերոյիշեալ երկու գիրքերուն պատմական նշանակութիւնը. առաջինը՝ «Հայկական Ցեղասպանութիւնը» ֆրանսերէն բնագրով, որուն հեղինակն է Դոկտ. Ռէյմոն Գեորգեան, թարգմանուած է անգլերէնի, ռուսերէնի, թրքերէնի եւ վերջերս ալ արաբերէնի, Գահիրեի ԶԲԸՄ-ին նախանձեռնութեամբ: Գիրքը նկատուած է որպէս ամենամանրամասնեալ վաւերագրական աշխատասիրութիւնը



հայկական ցեղասպանության մասին:



Երկրորդ գիրքը, որուն շնորհանդեսը եւս կատարուեցաւ, Ա. Զատորն է «Հայաստան եւ Հայերը Արաբական Մամուլին մէջ, 1876-1923» ծաւալուն գործին: «Մենք՝ Գահիրէի ԶԲԸՄ-ի մէջ, իսկապէս հպարտ ենք որ կարողացանք իրագործել այս երկու կոթողական ծրագրերը» յայտարարեց Տոքթ. Վիգէն Ճիգմէճեան: «Նկատի ունենալով անոնց կարեւորութիւնը, երկուքն ալ կը կարօտէին ուժերու լարման եւ կը պահանջէին մասնագիտական բժախնդիր աշխատանք»: Ապա խօսք առնելու հրաւիրեց Գահիրէի ԶԲԸՄ-ի պատուոյ ատենապետ Տիար Պերճ Թերզեանը, որ մօտէն իրազեկ ըլլալով թարգմանական աշխատանքի գործընթացին, ներկայացուց «Հայկական Ցեղասպանութիւնը» գիրքին արաբերէն թարգմանութիւնը, անոր հեղինակ՝ Դոկտ. Ռէյմոն Գեորգեանը, թարգմանութիւնը կատարող Տիկին Սահար Թաուֆիքը եւ վերահասու վերստուգիչ Դոկտ. Գեորգ Եազըճեանը. վերջինս պատրաստած էր նաեւ գիրքին անուանացանկը: Վերջինս դժբախտաբար, կամքէ անկախ պատճառներով, չէր կարողացած ներկայ



գտնուիլ հանդիսութեան:

Ապա խօսք առաւ գիրքին հեղինակը՝ պատմաբան Դոկտ. Ռէյմոն Գեորգեան, որ այս առիթով յատկապէս հրաւիրուած էր Փարիզէն. յարգելի դոկտորը բացատրեց թէ ինչպէս իր մտքին մէջ ծագած էր ցեղասպանութեան մասին գիրք մը գրելու գաղափարը եւ թէ ինչ մեթոտներ օգտագործած էր, մանրակրկիտ եւ ճշգրիտ տեղեկութիւններ քաղելու համար բնաշնչման ծրագրումէն մինչեւ կատարում, փաստելու համար 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան սարսափելի եղելութիւնները: Դոկտ. Գեորգեան շնորհակալութիւն յայտնեց Գահիրէի ԶԲԸՄ-ին եւ անոր ատենապետին, որոնք կարողացած էին լուծել բոլոր դժուարութիւնները եւ ի լոյս ընծայել իր գիրքին արաբերէն թարգմանութիւնը: Ան մասնաւորաբար իր երախտագիտութիւնը յայտնեց Պր. Պերճ Թերզեանին, որ յարատեւօրէն հետեւած էր թարգմանական գործընթացին, կապ պահելով հեղինակին, թարգմանիչին եւ վերստուգողին հետ, այդպիսով ապահովելով սպասուածէն ավելի բարձրամակարդակ եւ նման ծաւալուն ծրագիր մը արդարացնող հրատարակութիւն մը:

Հերթը եկած էր խօսք առնելու գիրքին արաբերէն թարգմանութիւնը կատարող Տիկին Սահար Թաուֆիքի: Ան յայտնեց թէ որքան բժախնդիր աշխատանք կատարած էր, լաւագոյնս կարենալ թարգմանելու համար 1235 էջերէ բաղկացած (առանց ցուցակագրութեան վերջին 91 էջերուն) այս ծաւալուն գիրքը եւ այդ ընթացքին որքան յուզուած ու տառապած էր, տեղեկանալով հայոց կրած չարչարանքներուն:

Ապա Պր. Պերճ Թերզեան կրկին հանդէս





գալով, հակիրճ խօսքով ներկայացուց «Հայաստան եւ Հայերը Արաբական Մամուլին մէջ. 1876-1923» կոթողական գործը, որուն ձեռնարկած է Գահիրէի ԶԲԸՄ-ը 2001 թուականէն ի վեր, գտնելու, ընթերցանելու եւ կարգաւորելու համար Հայաստանի եւ հայերուն մասին գրուած բոլոր այն յօդուածները, որոնք լոյս տեսած են այդ շրջանին, արաբական մամուլին մէջ:

Այս խօսքը տրուեցաւ այս գործին գլխաւոր պատասխանատու Դոկտ. Մոհամետ Րիֆաաթ Ալ Իմամի: Ան խօսեցաւ ծրագրին մասին, հետազօտական աշխատանքներ կատարող իր խումբի անդամներուն մասին, որոնք լայնածաւալ պրպտումներ կը կատարեն Եգիպտոսի Ազգային Մատենադարանի աւելի քան 253 արաբական օրաթերթերուն եւ պարբերաթերթերուն մէջ, վաւերագրական գրութիւններ գտնելու համար Հայաստանի եւ հայերուն մասին, միաժամանակ կ'արձանագրեն ցեղասպանութեան դէպքերուն նկատմամբ արաբական մամուլին արձագանքները:

Դոկտ. Րիֆաաթ Ալ Իմամի խօսքէն ետք, Դոկտ. Վիգէն Ճիզմէճեան ներկայացուց այս գիրքերուն հետ աղերս ունեցող նոր կայքէջը՝ www.arminmedia.com, որուն մէջ ներբեռնուած են մօտաւորապէս 36.000 յօդուածներ եւ վաւերագրեր, եւ բացատրեց թէ ինչպէ՛ս կարելի է հասնիլ անոնց:

Խօսք առնելու հրաւիրուեցաւ նաեւ հանդիսութեան պատուոյ հիւրը՝ Դոկտ. Մուսթաֆա Էլ Ֆիքի, որ խօսեցաւ Եգիպտոսի մէջ հայերուն ներկայութեան կարեւորութեան մասին եւ այն ազդեցութեան, զոր գործած են անոնք եւ ցարդ ունին ընկերային,



քաղաքական եւ մշակութային մարզերէն ներս: Դոկտ. Էլ Ֆիքի գովաբանեց հայերը իրենց հաւատարմութեան համար եւ դրուատեց զիրենք որպէս հմուտ արուեստագետներ:

Դոկտ. Էլ Ֆիքիի խօսքէն ետք, ժամանակը եկած էր երկու նոր գիրքերուն աւանդական գինեձօնը կատարելու: Երկու հեղինակները՝ Դոկտ. Ռէյմոն Գեորգեան եւ Դոկտ. Րիֆաաթ Ալ Իմամ, Հայաստանի խորհրդանիշը ներկայացնող պտուղին՝ նուռին հիւթը հեղուցին գիրքերուն վրայ, մասնակցութեամբ Գահիրէի ԶԲԸՄ-ի պատուոյ ատենապետ Տիար Պերճ Թերգեանի, ԶԲԸՄ-ի Եգիպտոսի շրջանակային յանձնաժողովի ատենապետ Տիար Օնսիկ Պըլըքտանեանի եւ Գահիրէի ԶԲԸՄ-ի ատենապետ Դոկտ. Վիգէն Ճիզմէճեանի, ներկայներուն ջերմ ծափողջոյններուն ներքեւ:



Հանդիսութեան աւարտին շարունակուեցաւ համադամ ճաշերու սպասարկումը:

*ԶԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝
Անայիս Ճիզմէճեան*

ԱՌ-ԱԶԻՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ

Մանուկի մը առաջին քայլերն ու որեւէ ծրագրի առաջին քայլերը նոյնքան կարեւոր են, նոյնքան խանդավառող եւ ուրախութիւն առթող:

Առաջին քայլերու յաջողութիւնն է ընդհանրապէս գլխաւոր խթանը յաջորդ քայլերու յաջողութեան:

Այս համոզումով է որ ՀԲԸՄ-ի (ՀՀՀ, AVC) պատասխանատուները, գլխաւորութեամբ Տիկ. Աննա Թրայեանի, օրուան նշանաբան ընտրած էին «Առաջին քայլ, առաջին յաջողութիւն» արտայայտութիւնը:

Առաջին քայլերու յաջողութիւնն էր որ կը տօնուէր Շաբաթ, 28 Մայիս 2016-ի երեկոյեան, ՀԲԸՄ-ի Ս. Չագըր մտերմիկ սրահէն ներս: Հայկական Համացանցային Համալսարանի (ՀՀՀ, AVC) հայոց լեզուի դասընթացքներուն առաջին փուլը իր աւարտին հասած էր 23 մասնակիցներով, որոնք այնտեղ էին, ստանալու համար իրենց յաջողութիւնը հաստատող վկայագրերը:

Եգիպտոսի եւ Գահիրէի ՀԲԸՄ-ի պատուոյ ատենապետ Պր. Պերճ Թերզեան եւ Գահիրէի ՀԲԸՄ-ի ատենադպիր Պր. Մարտիկ Պալայեան եկած էին մասնակցելու այս ուրախութեան եւ վկայագրերը յանձնելու մասնակիցներուն:

Փոքրիկ հանդիսութիւնը սկսաւ ՀՀՀ-ի դեսպան տիկ. Աննա Տոլապճեան-Թրայեանի անգլերէն խօսքով, «որովհետեւ առաջին հանգրուանն է ասիկա»:

-Մանկունակ թուի թերեւս, սակայն բառ առ բառ եւ նախադասութիւն առ նախադասութիւն սորվեցան հայերէնը, որուն հան-

դեպ սերը շատերու համար արեան մէջ է. ահա թէ ինչո՞ւ այսօրը մեզի համար ուրախութեան օր է:

Տիկ. Թրայեան ծանուցեց նաեւ, որ յառաջիկայ աշնան բ. հանգրուանը պիտի ունենան, միաժամանակ ա. հանգրուան մը սկսելով նոր մասնակիցներու համար:

Երեւանէն ուղիղ կապով (skype) կապեցան Արփիսէն, Յասմիկը եւ Անին, որոնք այս առաջին խումբին հետ աշխատած են անցնող շրջանին:

Օրուան անակնկալը պաստառին վրայ երեւումն էր ՀՀՀ-ի հիմնադիր եւ տնօրէն Դոկտ. Երուանդ Չօրեանի, որ ԱՄՆ-էն նոր հասած էր Երեւան եւ շնորհաւորանքի իր խօսքը փոխանցեց առաջին հանգրուանի մասնակիցներուն:

Դասընթացքի մասնակցիներէն «լաւագոյն աշակերտ» ճորճը բաւական սահուն հայերէնով ըսաւ թէ «բաւական դժուար էր, բայց յոյս ունիմ որ կը շարունակեմ եւ շատ լաւ կը սորվիմ»:

Տիկ. Լիլիթ Նահապետեան ջութակի վրայ նուագեց երկու կտորներ՝ Թայիսի «Meditation»-ը եւ Կոմիտասի Հայաստան երգի մեղեդին:

Տեսերիզով ցուցադրուեցաւ վեց վայրկեան տեւող «Ուրախ Յիշողութիւններ» երիզը, որ կ'ամփոփէր դասընթացքէն առնուած պահեր, եւ որ տիկ. Անի Պօղոսեան-Թաշճեանի աշխատանքն էր:

Ապա բեմ հրաւիրուեցան ՀԲԸՄ-ի ներկայացուցիչները, տնօրէնուհին, մասնակիցները, ըստ իրենց աշխատանքային





խումբերուն, իրենց պատասխանատու ուսուցչուհիներուն՝ Տիկիններ Լալա Շամամեան-Նիկոլեանի եւ Սիլվա Պայրամեան-Սիմոնեանի, եւ աշխատանքները համադրող Ռուպինա Ասլանեան-Նորարեւեանին հետ: Իւրաքանչիւր մասնակից իր վկայագրին հետ ստացաւ նաեւ Ալ. Սարուխանի «Տես Խօսքերդ» գիրքէն օրինակ մը, որ Սարուխան ընտանիքին նուէրն էր այս առիթով:

Աւարտին խօսք առաւ Պր. Պերճ Թերզեան եւ ըսաւ.

-AVC-ն առաջին անգամ ներկայացուց Դոկտ. Երուանդ Չօրեան, 2006 թուականին, ԶԲԸՄ-ի հիմնադրութեան 100-ամեակին առիթով Գահիրէի մէջ կայացած տօնակատարութիւններուն ընթացքին: Անկէ ետք ո՛ր որ Դոկտ. Չօրեանը հանդիպէինք, կը քննարկէինք թէ ինչպէ՛ս AVC-ն կարելի է սկսիլ Գահիրէի մէջ, մինչեւ այն

օրը, երբ Աննան առաջարկեց յանձն առնել AVC-ին պատասխանատուութիւնը:

Տիկին Աննան կարողութիւնը ունի խանդավառելու իր շուրջինները եւ ուսուցիչները:

Այսօր ԶԶԶ-ն առանձին կազմաւորում մըն է ԶԲԸՄ-էն ներս: Յոյս ունինք որ այլ ծրագիրներ եւս կ'իրագործուին:

ԶԶԶ-ն Տիկ. Թրայեանի երկրորդ ծրագիրն է, առաջինը ճատրակի դասընթացքը եղած է, եւ ինչպէս յայտարարեց տիկ. Աննան, բարեկամական մրցումներ տեղի պիտի ունենան 16 Յունիսին:

Բոլոր ներկաները՝ դասընթացքի մասնակիցներն ու անոնց հարազատները իրապէ՛ս ուրախ էին իրենց առաջին քայլերուն յաջողութեամբ:

Փոքրիկ եւ հաճելի հիւրասիրութենէ մը ետք ներկաները բաժնուեցան, լաւ գործ մը կատարած ըլլալու գոհունակութեամբ:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այս տարի կը լրանայ ԶԲԸՄ-ի բարեյիշատակ եւ մեծանուն բարերարուհի Սաթենիկ Ճ. Չագըրի մահուան 34-րդ տարելիցը:

Այս առիթով ամենամեայ աւանդութեան համաձայն Գահիրէի ԶԲԸՄ-ը հոգեհանգստեան պաշտօն խնդրած էր բարեյիշատակ բարերարուհիին հոգւոյն ի հանգիստ:

Հոգեհանգստեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի 28 Մայիսին, պատարագի աւարտին, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

Ներկայ էր բարերարուհիին յիշատակը յարգող միութենականներու կոկիկ հասարակութիւն մը:

ՍԱՐՈՒԽԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ ԿՈԿԱՆԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ



Հինգշաբթի, 2 Յունիս 2016-ի երեկոյան, Հելիոպոլսոյ Կոկանեան սրահին մէջ տեղի ունեցաւ հանճարեղ երգիծանկարիչ Ալեքսանտր Սարուխանի գործերուն հերթական ցուցահանդէսը:

Շքեղ եւ լուսաւոր դահլիճին մէջ յարմարագոյն դասաւորութեամբ ցուցադրուած էին տարբեր ժամանակներու Սարուխանի գործերէն մօտաւորապէս 80 կտորներ, որոնք լիարժեքօրէն կը ներկայացնէին անոր յիսնամեայ գործունեութիւնը:



Ցուցադրուած էին բովանդակութեամբ քաղաքական, ընկերային ու մշակութային բնոյթի գործեր: Կային նաեւ դիմանկարներ ու գիրքերու նկարազարդումներ:

Հետեւաբար, ներկաները ամբողջական պատկերացում մը ունեցան Սարուխանի արուեստին մասին:

Բացի այդ, ցուցադրուած էին նաեւ Սարուխանի ինքնանկարն ու իր սիրեցեալ տիկնոջ դիմանկարը՝ երկուքն ալ իւղանդկար աշխատանքներ:

Այս առիթով ներկաները տեսան նաեւ այն ձայնասփիւռը, որմէ Սարուխան Համաշխարհային Երկրորդ պատերազմի ընթացքին օրը օրին կը ստանար վերջին լուրերը, որոնք նիւթ կը հայթայթէին իր հերթական երգիծանկարին համար:

Շնորհակալութիւն Կոկանեան Սրահի վարչութեան, նաեւ ցուցադրութիւնը կազմակերպողներուն, յատկապէս Սարուխանի զոյգ թոռնուհիներուն՝ Սօսիին ու Սիլվային:

Հրանդ Զէշիշեան





ՆՈՐԱՓԹԻԹ ՏԱՂԱՆԴԻ ՄԸ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ



Եգիպտահայ համայնքը թեև ծանօթ է Ռիթա Գեորգեան անունին, դիմագիրքին միջոցով, սակայն անոր նկարներուն իրողապես ծանօթանալը ամբողջովին այլ տպավորութիւն կը ձգէ դիտողին վրայ:


Հակառակ իր մատղաշ տարիքին (ծնած 2003-ին) եւ նկարելու անփորձութեան, Ռիթայի գծանկարները կը հաստատեն որ կը գտնուինք մեծ շնորհ ունեցող պարմանուհիի մը առջեւ, որուն բնատուր տաղանդը կրնայ յարատեւութեամբ, աշխատանքով եւ մեծ ձգտումներու մղումով ծաղկիլ, հասուննալ եւ դառնալ կարելոր շառաւիղը եգիպտահայ նկարիչներու մեծ փաղանգին, որոնց մէջ միջազգային տարողութեամբ քանի մը կարելոր անուններ կան:

Իր սկզբնական նկարները լուսանկար-

ներէ առնուած փոխադրութիւններ են. սակայն վերջերս նշմարելի յառաջխաղացում մը կը նկատուի իր մօտ, շնորհիւ նկարչութեան դասերուն, որոնց կը հետեւի Ռիթան, «որդեգրուած» ըլլալով Գահիրէի Առաջնորդարանին եւ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ: Ռիթային նկարչութեան ուսուցիչը՝ Դոկտ. Եուսէֆ Մըքքաուի, գեղարուեստի դասախօս է Չամալէքի Հելուան համալսարանէն ներս:

Յուսով ենք որ Ռիթան, շնորհիւ իր հանդարտ եւ յարատեւող խառնուածքին, կարենայ շրջանցել կեանքի դժուարութիւնները եւ հասնիլ իր նպատակներուն: Լաւագոյն մաղթանքներ ունինք իրեն համար եւ մեծ յոյսեր՝ իր հանդէպ:

«Տ»



ԿԱՐԵՒՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՕԳՆԵՆՔ ԱՐՑԱԽԻՆ

ՀԲԸՄ-ը կը շարունակէ Ապրիլեան քառօրեայ պատերազմէն ետք ռախածեմնած Արցախի օգնութեան ծրագիրը, որուն ծիրէն ներս, Յուլիս 2016-ին կնքուած է պայմանագրութիւն մը ՀԲԸՄ-ի եւ ՀՀ Պաշտպանութեան ռախարարութեան միջեւ: Այս պայմանագրութեամբ Միութիւնը բանակին կը տրամադրէ բժշկական անհրաժեշտ գործիքներ, ինչպէս 2000 հատ արիւնահոսութիւնները կասեցնող C.A.T. սարք, իսկ երեք ամիսներու ընթացքին՝ երկու շարժական x ray-ի գործիքներ, մէկը Երեւանի, երկրորդը Ստեփանակերտի զինուորական հիւանդանոցներուն համար, շտապ օգնութեան երկու շարժական անկողիներ, վերակենդանացման անհրաժեշտ սարքաւորումներով, զորս ուղղաթիւներու մէջ կարելի է տեղադրել, վիրաւորները աւելի արագ կերպով հիւանդանոց տեղափոխելու համար:

Այս պայմանագրի ստորագրութեան ներկայ եղած են ՀԲԸՄ-ի Երեւանի գրասենեակի տնօրէնական տնօրէնուհի Դալար Գազանճեան, եւ ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան անդամ եւ ՀԲԸՄ-ի Երեւանի ռախագահ Վազգէն Եագուպեան:

«Օգնեք Արցախին» դրամահաւաքը ապահոված է աւելի քան 325 հազար ամերիկեան տոլար: Յատկացումներ եղած են Ապրիլեան մարտերուն վիրաւորուածներուն, տեղահանուածներուն եւ զոհուած զինուորներու ընտանիքներուն:





ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՒՄԻՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՅՍՈՐ

Անցնող Մարտ ամսուն Սուրիոյ պատերազմը թեւակոխեց իր հիւնդերորդ տարին: Հինգ տարիներ, որոնց ընթացքին սուրիահայութիւնը, մասնաւորաբար հալէպահայութիւնը տուժեց շատ աւելի, քան սպասելի էր. տուժեց ոչ միայն նիւթապէս, հոգեպէս, բայց մանաւանդ մարդկային կեանքերու առումով: Այս վերջինը, հասկնալի է որ ամենէն ծանրն է վնասներուն, բայց մեր, հայերուն պարագային կը կրկնապատկուի այդ վնասը պարզ այն պատճառով, որ մենք նաեւ թիւի հարց ունինք: Ճիշդ է որ այսօր ամբողջ հայութիւնը տասը միլիոն կը հաշուէ (առաւել թէ նուազ ճշգրտութեամբ), սակայն այդ տասը միլիոնը նոյն տարածքին վրայ է, ինչ որ կը նուազեցնէ անոր ուժականութիւնը: Սուրիոյ պատերազմը, ա՛յս առումով, մեծ վնաս պատճառեց համայն հայութեան:

Հալէպահայ բոլոր պատկան մարմիններու կողքին, ՀԲԸՄ-ը եւս իր կարելին կ'ընէ թերեւցնելու համար այս տագնապէն ծնած կենսական եւ առօրեական հոգն ու ծանր բեռը ժողովուրդին:

Սուրիոյ ՀԲԸՄ-ի «Հայեացք» պարբերաթերթէն կը քաղենք վերջին տարիներէն Հալէպի կացութեան եւ ՀԲԸՄ-ի տարած աշխատանքին, ՀԲԸՄ-ի Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Տիար Ներսէս Ներսոյեանի հետ կատարուած հարցազրոյցէն եւ պարբերաթերթին տեղեկատուական յօդուածներէն:

Այս հարցազրոյցը կատարուած է անգլերէն լեզուով, ՀԲԸՄ-ի Ամերիկայի պաշտօնաթերթին համար, լոյս տեսած է հանդէսին Փետրուարի համարին մէջ եւ ամբողջութեամբ թարգմանուած հայերէնի, «Հայեացք»ին համար:

Հարցազրոյցին մէջ Պր. Ներսէս Ներսոյեան կ'անդրադառնայ Սուրիոյ տագնապին պատճառած այն ծանր կացութեան, որուն համար անմիջական օգնութեան կարիք զգացուած է՝ ինչպէս տղան պատճառով պարենի մատակարարում, աւերուած տուներու փոխարէն տուներու յատկացում, վառելանիւթի եւ բժշկական օգնութեան հայթայթում: ՀԲԸՄ-ը եղած է այն միութիւնը,

որ առաջինը ի՛նք ձեռնարկած է Արտակարգ Վիճակի Մարմնի մը ստեղծումին, Հալէպի, Դամասկոսի եւ Գամիշլիի մէջ, համայնքի անդամներուն առօրեան գոնէ տանելի դարձնելու համար:

Զմրան ցուրտը դիմագրաւելու համար Միութիւնը ոչ միայն ծերերուն եւ մանուկներուն տաք հագուստներ բաժնած է, այլ եւ քաղաքապետարանի միջոցով պիւթակագի շիշեր բաժնած կարիքաւոր ընտանիքներուն:

ՀԲԸՄ-ը սերտօրէն կը գործակցի սուրիահայոց Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Մարմնին հետ, որուն մաս կը կազմեն Հայ Առաքելական, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական Առաջնորդները: Ասոնցմէ զատ պէտք է նշել նաեւ Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկը, Գարակեօգեան Հիմնարկն ու Սուրիահայ Օգնութեան Խա-



Տէր Զորի Սրբոց Նահատակաց Եկեղեցին

չը, որոնցմէ իւրաքանչիւրը ունի համայնքի զաւակներուն օգնելու եւ անոնց անմիջական կարիքները հոգալու իր առանձին ծրագիրը:

Ըստ յարգելի Ատենապետին, այսօր սուրիահայ գաղութը, արտագաղթի պատճառով կորսնցուցած է իր թիւին մեծ մասը (տրամաբանական եւ մօտաւոր թիւ մը տալու համար ըսենք, որ Զալէպի դպրոցներուն աշակերտութեան թիւը 3500 է, հետեւաբար բնակչութեան թիւը կը տատանի 12-15 հազարի միջեւ. հմբ.): Դեպի օտար ափեր գաղթին զուգահեռ, հալէպահայերէն շատեր գաղթած են Սուրիոյ աւելի ապահով քաղաքներ, ինչպէս Լաթաքիա եւ Դամասկոս:

Պատերազմին եւ գաղթին կարելոր անդրադարձներէն մէկն ալ մարդու զգալի նուազումն է. գաղութը կորսնցուցած է տարբեր բնագաւառներու իր փորձառու մասնագետները, ինչպէս ուսուցիչներ, միութենական ղեկավարներ եւ այլն: Ծիշո՞ւ է որ երիտասարդներ կան, որոնք մեծ եռանդով կ'աշխատին, սակայն անոնց կը պակսի փորձառութիւնը:

ԶԲԸՄ-ի կարելոր ներդրումներէն մէկն ալ այն է, որ թիւով մինչեւ հարիւր անձեր կրնան իրենց ամբողջ օրը անցընել Միութեան սկումբին մէջ, օգտուիլ ջուրէն, բաղնիքնե-

րէն, կրնան իրենց սարքերը լիցքաւորել օգտուելով Միութեան ելեկտրածինէն, ինչպէս նաեւ կորով եւ յոյս ստանալ պարգապէս ... միասին ըլլալով:

Խօսելով դպրոցներու հսկայ ցանցին մասին (վեց նախակրթարան եւ չորս երկրորդական վարժարաններ), ԶԲԸՄ-ի Ատենապետը նշեց, որ բացի ԶԲԸՄ-ի Գ.Կիւլպէնկեան-Ն.Նաճարեան դպրոցէն, որ կը գտնուի քաղաքին կեդրոնը, կարգ մը փոքր դպրոցներ, որոնք կը գտնուէին վտանգաւոր շրջաններու մէջ, միացած են մեծ դպրոցի մը մէջ, որպէս Միացեալ Վարժարան:

Պետք է նշել, որ Սուրիահայ Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Մարմինը, Գ. Կիւլպէնկեան Զիմնարկութիւնը, ինչպէս նաեւ Ֆրանսայի եւ Գերմանիոյ հայ համայնքներու նուիրատուութիւնը կը սատարեն դպրոցներու 50% ծախսերուն: Իսկ անկարող ընտանիքներու զաւակներուն համար ԶԲԸՄ-ը կը հոգայ ոչ միայն կրթաթոշակը, այլ եւ բոլոր յարակից ծախսերը: Յարգելի Ատենապետը շեշտեց, որ Միութեան եւ համայնքի բոլոր կողմերուն համար փոքրերը կը մնան մտահոգութեան եւ գուրգուրանքի գլխաւոր առարկաները:

Վերջաւորութեան ԶԲԸՄ-ի Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Պր. Ներսէս Ներսոյեան կոչ ուղղեց համայն հայութեան սատար կանգնիլ սուրիահայոց (եւ օգնութեան լաւագոյն միջոցը նիւթակաւնը համարեց, նկատի առնելով որ պարէն թէ այլ տեսակի օգնութիւն դժուար է Զալէպ հասցնել) եւ իր խօսքը վերջացուց ըսելով.

«Պիտի ուզէի որ անոնք [համայն հայութիւն եւ միջազգային ընտանիք] գիտնան թէ Զալէպի մէջ միշտ գոյութիւն պիտի ունենայ հայկական համայնք մը: ... Զալէպահայութիւնը պիտի վերակառուցէ Զալէպը, անոր վերադարձնելով «մայր» գաղութ ըլլալու կարգավիճակը»:



Տէր Չօրի Սրբոց Նահատակաց Եկեղեցին քանդումէն վերջ



ԶՐՈՅՑ ԵՐԵՒԱՆԻ ՀՐԸՄ-Ի ԿԵԴՐՈՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՏՆՕՐԷՆՈՒՀԻԻՆ ԴԱԼԱՐ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ ՀԵՏ

ՀՐԸՄ-ը տարի մը առաջ էր որ ունեցաւ իր շէնքը, Երեւանի Մելիք Ադամեան փողոցին վրայ, նախկին քաղաքային դումայի շէնքին տեղ, նոյն քարերով կառուցուած եւ խորհրդանշական իմաստ ունեցող կառոյց մը:

Նախկին քաղաքային դուման կառուցուած է նոյն այն տարին, որ հիմնուած է ՀՐԸՄ-ը, այսինքն՝ 1906 թուականին:

Նոր կառոյցին ճակատը ճեղքուած է եւ անկէ կ'երեւի «21րդ դարու ապագան», ինչպէս ըսած է ՀՐԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ եւ շէնքին աւագ ճարտարապետ Արիս Ադամեանը:

1990-ին բացուած Երեւանի գրասենեակը իր ուշադրութիւնը կեդրոնացուցած է ոչ այնքան մարդասիրական, որքան երկրի յառաջդիմութեան սատարող աշխատանքներու վրայ:

Կեդրոնը վերջերս ունեցած է իր նորանշանակ տնօրէնուհին, որուն հետ «ՏԵՂԵԿԱՏՈՒ»-ն ունեցաւ հետաքրքրական զրոյց մը:

Տարիներ առաջ զրուցակցին մէկ դասախօսութեան ներկայ էր Դալար Գազանճեանը, որպէս երիտասարդ, ապագային ինքնավստահօրէն նայող համալսարանական:

Հիմա կը ներկայանայ որպէս լաւագոյն կերպարը արդի հայ երիտասարդուհիին, որ արեւմտեան ուսումին եւ զարգացումին կը միացնէ հայ ոգիի զօրութիւնը, որուն լեզուն կ'երթեւեկէ արեւմտահայերէնին եւ արեւելահայերէնին միջեւ, եւ որ կարեւոր խոստում մը կը բերէ ՀՐԸՄ-ի Հայաստանի գրասենեակին:

Այսօր ես եկած եմ զինք լսելու: Եւ որովհետեւ արհեստավարժ լրագրող չեմ - փաստ որ ձայնագրիչս աւրուեցաւ, իսկ լուսանկարչական գործիքս սիրողական էր - հարցեր տալէ աւելի կը զրուցեմ իր հետ ՀՐԸՄ-ի Երեւանի գրասենեակին ժողովասրահէն ներս, թափանցիկ, ճերմակ եւ խաղաղութիւն ներշնչող տարածքի մը մէջ:

2րուցող - Կը ներկայանա՞ք մեր՝ եգիպտահայ գաղութի ընթերցողներուն:

Դալար Գազանճեան - Ծնած եմ Հալէպ եւ յաճախած եմ Դամասկոսի եւ Մոնթրէալի ՀՐԸՄ-ի վարժարանները, քանի մը տարի Գանատա ապրած, ապա Լիբանան համալսարան յաճախած եմ: Բարձրագոյն (masters) ուսումս ստացած եմ Ամերիկա International Economics եւ Strategic Studies աւարտած եմ, John Hopkins School of Advanced International Studies, որ Ուաշինկթընի մէջ է: Շատ հետաքրքրական դասախօսներ ունեինք, որոնց հետ աշխատիլը շատ մեծ փորձառութիւն էր ինծի համար,

օրինակ այն օրերու Գոնտովէսա Րայսի խորհրդատուն մեր դասախօսն էր, նախկին CIA-ի տնօրէնը մեր դասախօսն էր, եւ այլն. ասիկա ինծի մեծ առիթ տուաւ որ լրիւ հասկնամ ա՛յդ մտածելակերպը (mind set), օրինակ ինչպէս պետութիւն մը կը մտածէ, ինչպէս մարդ ռազմավարական ձեւով կը սկսի մտածել, տարբեր տեսակի պետական աշխատանքներու եւ ծրագիրներու մասին:

2րուցող - Մեզի համար նորութիւն է, չէ՞, ռազմավարական ձեւով մտածելը:

Դ.Գ. Այո՛, նորութիւն է: Այստեղ կ'ուզեմ մէկ բանի անդրադառնալ. քանի այս հարցազրոյցը մասնաւորապէս եգիպտահայ

համայնքին համար է, կ'ուզեմ ըսել որ Աշոտ Չօրեանը, որ Եգիպտոսի նշանաւոր արւեստագետներէն եղած է, մեծ հօրս հօրեղբորորդին կ'ըլլայ, թէեւ իրարու չենք հանդիպած, բայց մեծ հօրս տան մէջ յաճախ կը խօսէինք իր մասին, իր նկարները այնտեղ են եւ ինք իմ մանկութեանս մէջ մեծ տեղ ունեցած է: Մօտ եղած ենք այդ բոլորին եւ ես գիտեմ թէ ինք որքան կը սիրէր Եգիպտոսն ու Եգիպտահայ համայնքը:

Չրուցող - Ո՛ր աշխատած էք ընդհանրապէս. գիտեմ որ շատ տարբեր երկիրներ եղած էք:

Դ.Գ. - Booz Allen Hamilton: Strategy and Technology Consulting Firm խորհրդատուական ընկերութեան հետ, եղած եմ Արաբական Ճոցի երկիրները, Միջին Արեւելք, Նաեւ Արեւելեան Եւրոպա, Կովկաս, Միջին Ասիա, Ռուսաստան եւ այլն: Այսինքն աշխատելով թէ՛ տեղական պետութիւններուն եւ Նախարարութիւններուն հետ, եւ թէ՛ միջազգային կազմակերպութիւններուն հետ, ինչպէս օրինակ ամերիկեան պետութիւնը այնտեղ տարբեր ծրագիրներ կ'իրականացնէ եւ կը գործակցի այդ երկիրներուն պետութիւններուն հետ:

Չրուցող - Ձեռով մը ե՛ւ ներքին, ե՛ւ արտաքին կապերու միջեւ ... եւ այս ամբողջ փորձառութիւնը հիմա հոս, Հայաստանի մէջ օգտագործելու հեռանկարով, չէ՞:

Դ.Գ. - Այո այո ... պատճառներէն մէկը, որ ընդունեցի Բարեգործականի մէջ այս պաշտօնը վերցնել, - անշուշտ ես միշտ անդամ եղած եմ ՀԲԸՄ-ի, ինչպէս մենք կը սիրենք ըսել՝ ի ծնէ. ո՛ր որ ալ գտնուած եմ, ո՛ր քաղաքն ալ որ ապրած եմ, մասնակցած եմ տեղւոյն ՀԲԸՄ-ի ծրագիրներուն, օրինակ Ուաշինկթըն DC-ի, Տուպայի եւ Թիֆլիսի AGBU Young Professionals-ը հիմնողներէն մէկը եղած եմ, շատ կ'աշխատէի որ տարբեր կապեր հաստատեմ եւ այլն, աշխատանքիս բերումով առիթը ունեցած եմ հասկնալու թէ՛ արեւմտեան, թէ՛ արեւելեան հայկական մտածելակերպերը, որոնք շատ տարբեր են իրարմէ, թէեւ շատ ալ նմանութիւններ ունին:



Չրուցող - Ասիկա շատ կարեւոր բան մըն է, մտածելակերպի այս տարբերութիւնը, որովհետեւ կը կարծեմ որ այդ երկուքը՝ այդ երկու մտածելակերպերը՝ հոս, Հայաստանի մէջ կը հանդիպին:

Անցնինք յաջորդ հարցումին: Ի՞նչ ձեռով կը կարծէք որ արեւմտեան եւ արեւելեան հայկական մտածելակերպերուն ձեր փորձառութիւնը, կրնայ օգտակար դառնալ Հայաստանի համար:

Դ.Գ. - ՀԲԸՄ-ը վաղուց դեր ունեցած է Հայաստանի մէջ, բայց անկախութենէն ետք այդ դերը տասնապատկուած է. ՀԲԸՄ-ի ղեկավարութիւնն ալ այդ ուղղութեամբ կ'աշխատի եւ ես ալ համամիտ եմ, որ մեր աշխատանքը քիչ մը Նաեւ ռազմավարական ըլլայ. շարունակենք մեր մարդասիրական աշխատանքը, բայց պետք է Նաեւ այլ քայլեր ձեռնարկենք, որպէսզի գործակից եւ մասնակից դառնանք Հայաստանի զարգացման: Գալիք ամիսներուն մեր խոր ռազմավարութիւնը կը մշակենք, թէ ի՞նչ որակի պետք է ըլլայ ՀԲԸՄ-ի ներկայութիւնը Հայաստանի մէջ, որո՞նք պիտի ըլլան մեր գործընկերները, ըլլան անոնք հայկական թէ միջազգային կազմակերպութիւններ. կը փորձենք տարբեր տեսակի համագործակցական խարիսխներ մշակել: Տակաւին ծրագրումի հանգրուանին ենք, բայց կրնամ ըսել որ շատ նորութիւններ պիտի ըլլան: Կարեւոր նորութիւն մըն է այն, որ Նախկին Սովետ Միութեան երկիրներու հայ հա-



մայնքներուն կը փորձենք հասնիլ եւ համագործակցիլ, ինչպէս օրինակ Ռուսաստանի եւ Վրաստանի մէջ: Միջին Ասիոյ մէջ հետաքրքրական համայնքներ ունեցած ենք, ինչպէս օրինակ Ուզպէքիստանի մէջ:

2րուցող - Միւս Եւրասիոյ հայեր կա՞ն հոն:

Դ.Գ. - Այո, կան, թէեւ մեծ չէ թիւը. ես օրինակ եղած եմ Զիրքիզիստանի մայրաքաղաքը՝ Պիշքէք, ուր ամենէն հռչակաւոր ճաշարանին տէրը հայ է:

2րուցող - Այսպիսի վայրեր, ուր հայերուն թիւը այնքան ալ մեծ չէ, կրնա՞ք ՀԲԸՄ-ի գրասենեակ բանալ, աշխատանք տանիլ, թէ՞ ...

Դ.Գ. - Չէ, անոնք այլ մեծ կեդրոններու կը կապուին: Կարելորդ այն է, որ հասկանք այդտեղերու համայնքներուն կարիքները, մտածելով թէ ՀԲԸՄ-ը ինչպէ՞ս կրնայ այդ կարիքները հոգալ: Երբ ՀԲԸՄ-ը Միջին Արեւելքի մէջ զարգացաւ 30-ական 40-ական թուականներուն, ինչի՞ վրայ հիմնուած էր, եթէ ոչ հայ համայնքներուն կարիքները հոգալ՝ դպրոցներով, ակումբներով, երիտասարդական ծրագրերով եւ այլն: Այդ ձեւով է որ կարելի եղաւ համայնքները յառաջ տանիլ: Այս իմաստով պէտք է ըսել որ ՀԲԸՄ-ը ռաիվիրա էր եւ նորարարական միջոցներով համայնքները յառաջ կը տանէր: Զիմա կ'ուզենք հասկնալ՝ կա՞յ նման առիթ որ ՀԲԸՄ-ը ունենայ նման դեր, նախկին Սովետի երկիրներուն մէջ, որովհետեւ այդ երկիրներու հայ համայնքներուն կարիքները շատ տարբեր են այլ՝ արդէն «դասական» համայնքներու կարիքներէն:

2րուցող - Օրինակ ինչպիսի՞ կարիքներ կը պատկերացնէք, եթէ սկսած էք ուսումնասիրել անշուշտ:

Դ.Գ. - Առաջին հերթին՝ կապել զիրենք հայկականութեան:

2րուցող - Ոգիի հարց այսինքն:

Դ.Գ. - Այո. որովհետեւ եթէ Սովետ Միութեան մտայնութեամբ նայինք հարցին ... ասոնք, որոնք կը ձգեն Հայաստանը եւ աշխատելու կ'երթան (ներքին սփիւռք), իրենց միտքին մէջ, իրենց համար նոյն երկիրն է,

նոյն տարածքին մէջ կը զգան տակաւին. հետեւաբար որեւէ ձեւով չեն զգար թէ իրենց ինքնութիւնը վտանգուած է. իրենց միտքին մէջ դեռ չկան համայնքային «մեխանիզմներ», այնպէս ինչպէս կան մեր, արեւմտեան համայնքներուն համար, որոնք գիտեն թէ ո՛ւր ալ երթան, պէտք է անմիջապէս հիմնուի եկեղեցի-դպրոց-ակումբ եռեակը, ասոր վրայ հիմնուած է արեւմտեան հայկական պաշտպանողական մտածողութիւնը:

2րուցող - Արեւմտեան կ'ըսէք, բայց ասիկա Սուրիա-Լիբանանէն սկսած է, Զարդէն ետք:

Դ.Գ. - Այո՛. Սուրիա, Լիբանան, Եգիպտոս: Յետոյ երբ հոսքը սկսաւ դէպի արեւմուտք՝ Եւրոպա կամ Ամերիկա, նոյն մտածելակերպով զացած հաստատուած են: Նախկին Սովետ միութեան հայկական համայնքները չունին այդ «մեխանիզմները». պէտք է իրենց բացատրուի թէ իրենք եւս, de facto (իրողապէս) սփիւռք են:

2րուցող - Թեկուզ ներքին, բայց սփիւռք են:

Դ.Գ. - Այո, հետեւաբար «մեխանիզմներ» կան, որոնք պէ՛տք է աշխատին, պէ՛տք է մտածեն դպրոց ունենալու մասին, պէտք է մտածեն ունենալու տեղ մը, ուր հայ երիտասարդութիւնը հաւաքուի, իրար ծանօթանալու, հայապահպանման համար: Այս բոլորը պէտք է բացատրուի, որպէսզի իրենք եւս արագ անցնին հանգրուանները, ժամանակ չկորսնցնենք, յետոյ տաս-տասն-հինգ տարի ետք չզգանք յանկարծ որ սեբունդ կորսնցուցած ենք. համայնքային մտածելակերպով պէտք է կազմակերպուին: Կարելոր է նաեւ որ այլ համայնքներու հետ կապեր մշակուին, ծանօթացումներ ըլլան:

2րուցող - Ընդհանրապէս համայնքներուն կապը աւելի շատ Հայաստանի հետ է, քան՝ իրարու հետ:

Դ.Գ. - Այո, կարելոր կ'ետ մըն է ասիկա, որովհետեւ նման աշխատանքներու կեդրոնը Հայաստան դարձած է. բայց պէտք է երկու կողմէն զօրացնել այս յարաբերութիւնները:

Ձրուցող - Այս բոլոր ծրագիրներուն եւ աշխատանքներուն համար ի՞նչ մարտահրաւերներ եւ ի՞նչ դժուարութիւններ կը տեսնէք:

Դ.Գ. - Դժուարութիւնները մեծ են այն իմաստով որ թէեւ այսօր որոշ չափով Հայաստան կեդրոն դարձած է, սակայն պէտք է աշխատանք տարուի ՀԲԸՄ-ն ու անոր արժանիքները տարածելու Հայաստանի մէջ, ուր այնքան ալ ծանօթ չէ այս միութիւնը. հետեւաբար պէտք է ծանօթացնել այն բոլորը, զոր ստացած ենք Պօղոս Նուպար Փաշայի եւ իր նման անձերէ, որոնք մեր ղեկավարները եղած են տարբեր գաղութներու մէջ եւ անձնուիրաբար ազգային աշխատանք տարած են. որովհետեւ այսօր կարիքը կը զգացուի ժողովուրդին բացատրելու թէ ինչո՞ւ պէտք է հպարտ ըլլան իրենց հայութեամբ, ինչպէս եւ մասնակից ըլլան հայակերտման եւ հայապահպանման աշխատանքին, որովհետեւ Հայաստան, որպէս երկիր եւ որպէս ընկերային հասարակութիւն, կ'անցնի շատ դժուար օրերէ, որոնք որոշ չափով ցուցանիշ են որ երկիրը յառաջ կ'երթայ. պէտք չէ ողբերգականօրէն դիտել, երբ երկիր մը հարցեր կ'ունենայ, որովհետեւ պէտք է բաղդատենք Հայաստանը իր հարեւան երկիրներուն հետ. եթէ ասիկա ընենք, պիտի տեսնենք որ շատ կետերու մէջ Հայաստան իր հարեւաններէն աւելի առաջ է, որպէս տեմոգրաթիք երկիր, որպէս մարդկային իրաւունքներու գաղափարին հետ հաշտուիլ եւ այլն, թէեւ այլ կետերու մէջ ալ ետ է ... Պէտք է աշխատիլ որ երկիրը տարբեր ցուցանիշերով յառաջ երթայ, եւ ոչ թէ մէկ կետի մէջ շատ յառաջանայ, միւսին մէջ շատ ետ մնայ ... Այս բոլորը դիտելով, պէտք է բացատրել Հայաստանի ժողովուրդին եւ ամբողջ հայութեան որ պէ՛տք է համբերատար ըլլալ, որովհետեւ որեւէ ազգ ու երկիր բազմաթիւ դժուարութիւններէ կ'անցնի մինչեւ կայացած երկիր եւ կայացած հասարակութիւն դառնայ: Պէտք է նեցուկ կանգնիլ ե՛ւ ժողովուրդին, ե՛ւ պետութեան, որ ճիշդ ճամբուն վրայ ճիշդ ձեւով շարժին, որովհետեւ կ'ուզենք որ Հայաստանը զարգացած երկիրներու շարքին ըլլայ: Այս իմաստով է որ մարտահրաւերները մեծ են: Սփիւռքը Հայաստանի



հետ կապելու մարտահրաւերը շատ մեծ է, որովհետեւ երկու տարին անգամ մը երկու շաբաթ Հայաստան գալը - թէեւ ատիկա առաջին քայլ մըն է - բայց բաւարար չէ: Մենք որպէս կազմակերպութիւն պէտք է միջոցը գտնենք գրաւելու երիտասարդ գոյգերը, օգնելու անոնց իրենց գաւազներուն հայեցի դաստիարակութեան մէջ, որպէսզի չկորսնցնենք մեր ներուժը:

Ձրուցող - Հետաքրքրական բան մը ըսիք՝ «պէտք է հպարտ զգան հայ ըլլալով». ասիկա ի՞նչ ձեւով կը մտածէք ընել, որովհետեւ յաճախ հայ-հայութիւն ըսելը հակազդեցութիւն կ'արթնցնէ պատանիներուն եւ երիտասարդներուն մէջ: Ես ալ համաձայն եմ, որ պէ՛տք է իրենց համոզել թէ ՇԱՏ բան ունին հայութեամբ հպարտանալու, բայց ի՞նչ ձեւով համոզել, կարծես ձեւն է որ ճիշդ չէ. տասէն մէկն է որ ունի այդ հպարտութեան եւ անոր պատճառին գիտակցութիւնը: Ըստ ձեզի, ինչպէ՞ս կարելի է ասիկա դարմանել:

Դ.Գ. - Ինչ որ պիտի ընենք մեր երիտասարդներուն համար, պէտք է ըլլայ լաւագոյնը. օրինակ եթէ ծրագիր մը պիտի կազմենք, պէտք է միջազգային մակարդակով շատ լաւ ծրագիր ըլլայ:

Ձրուցող - Մէկ խօսքով՝ մասնագիտական:

Դ.Գ. - Այո. հետեւաբար պէտք է ֆինանսական եւ մարդկային ռեսուրսներ (միջոցներ) տրամադրենք, որովհետեւ ա՛յս դարուն չենք կրնար միջակութիւն հրամցնել մեր երիտասարդութեան, որ խոհեմ է եւ ճիշդը սխալէն տարբերող. այսօր համացանցով եւ ipad-ով աշխարհի որեւէ անկիւ-



նեն որեւէ տեղեկութիւն կրնայ ստանալ. մենք մերը պետք է գերազանց ձեւով ներկայացնենք, որպէսզի իրօք համոզիչ դառնանք. սխալ կ'ըլլայ մանր եւ փոքր միջոցներով մօտենալ երիտասարդութեան: Այս ալ մեր երկրորդ մարտահրաւերն է՝ ի՞նչ ծրագրեր մշակել, ի՞նչ ձեւով նեցուկ կանգնիլ համայնքներուն մէջ հայապահպանման աշխատանք տանողներուն, որպէսզի իրենց աշխատանքը նորարարական ըլլայ: Հայ ըլլալը արդիական երեւոյթ պետք է ըլլայ եւ ոչ թէ հարիւր տարուան հնութիւն ունեցող բան մը:

Զրուցող - *Ասիկա հոյակապ ծրագիր է, բայց ի՞նչ ձեւով պետք է իրագործուի եւ ունի՞ր պետք եղած ուժերը:*

Դ.Գ. - Զունինք, պիտի կազմենք: Նախ այստեղի գրասենեակը պիտի նայինք թէ ի՞նչ ունինք, ինչպիսի ուժեր ունինք, յետոյ օտարներ, օտար մասնագէտներ:

Զրուցող - *Օտար այսինքն ոչ հայ:*

Դ.Գ. - Այստեղի հայեր, սփիւռքէն հայեր եւ օտարներ. պիտի փորձենք միատեղել եւ նայիլ թէ ինչպէ՛ս կրնան մեր ծրագիրներուն եւ ռազմավարութեան օգտակար դառնալ:

Զրուցող - *Գիտեմ որ երիտասարդ մասնագէտներու ծրագիրը կայ, ինչպէս եւ երիտասարդ երաժիշտներ, որոնք ամէն ամառ Երեւան կու գան, Կոմիտասի անուան երաժշտանոցէն ներս դասերու կը հետեւին. դուք կը պարտադրե՞ք կամ կ'առաջարկե՞ք որ իրենց սորվածը իրենց համայնքներուն մէջ փոխանցեն, սորվեցնեն եւ այլն:*

Դ.Գ. - Պարտադրանք ... ոչ. բայց ճիշդ էք, պէ՛տք է ձեւեր կամ «մեխանիզմներ» գտնել, որ փոխանցումը շարունակական ըլլայ:

Զրուցող - *Այլապէս կրնայ շատ անհատական մնալ:*

Դ.Գ. - Այո, ճիշդ էք: Մեր ռազմավարութեան մաս կը կազմէ նաեւ մեր ունեցած ծրագիրները վերանայիլ եւ զանոնք լրիւ բարելաւել, նայիլ թէ ո՞ր ծրագրերը յարմար են ... որովհետեւ գիտէք որ Հայաստանի ծրագիրները ամառնային են ընդհանրապէս,

այնպէս մը ընենք, որ աւելի երկար ժամանակի վրայ ըլլան:

Զրուցող - *Կը խորհի՞ք թէ կար որեւէ աշխատանք, զոր կարելի էր այստեղ տանիլ, չէ տարուած, եւ դուք հիմա կ'ուզէք այդ աշխատանքը ընել:*

Դ.Գ. - Զեմ կրնար ատիկա ըսել. պատմական իւրաքանչիւր շրջան իր հարցերը, եւ ըստ անոնց իր լուծումները ունեցած է. մենք հիմա կը գիտակցինք, որ ոչ միայն ՀԲԸՄ-ը, այլ ամբողջ Հայաստանը մեզի պետք ունի, պետք է իրապէ՛ս սատար կանգնիլ եւ օգնել որ երկիրը ճի՛շդ ուղղութեամբ երթայ: Այդ գիտակցութեամբ է որ փոփոխութիւններ կ'ընենք: Նախապէս՝ չեմ գիտեր, հիմա սակայն կարելոր եւ անկիւնադարձային շրջան է, եւ կը յուսանք օգտակար դառնալ:

Զրուցող - *Սակայն փոքր նշում մը կայ այստեղ. միշտ ալ կեցուածքը այն եղած է, որ «դուք մեզի նիւթապէս օգնեցէք, եւ թոյլ տուէք որ մեր հարցերը մենք լուծենք»: Անշուշտ ասիկա նուազած է, սակայն միշտ ալ կեցուածքը կայ: Երեկ հանդիպում մը կար համալսարանի կարելոր պաշտօնեայի մը հետ, որ անընդհատ կը կրկնէր՝ մենք հոս մասնագէտներ ունենք: Կարծես «մենք հոն» մասնագէտներ չունինք: Մինչդեռ դուրսի մասնագէտը իր հետ «դուրսի» մէթոտները կրնայ բերել: Չէ՞ք կարծեր որ նման կեցուածք կրնայ խոչընդոտ հանդիսանալ ձեր աշխատանքին:*

Դ.Գ. - Յառաջիկայ մէկ տարուան մէջ կը մտածենք ունենալ այնպիսի ծրագիրներ ինչպէս օրինակ Երեւանի Պետական Համալսարանի եւ Սփիւռքի նոյն ոլորտի մարդոց միջեւ կապերը զօրացնել, միջնորդ ըլլալ այդ կապերուն, որ սփիւռքէն մասնագէտներ գան եւ հոս վարժանքներ ընեն (training), նաեւ «քոյր համալսարաններ» ստեղծել, որպէսզի այստեղի դասախօսներն ու աշակերտները կարենան օգտուիլ դուրսի, արեւմուտքի նորութիւններէն եւ արդիական գաղափարներէն, ուսուցման նոր մեթոտներէն:

Զրուցող - *Այս բոլորը պիտի ըլլան ԵՊՀ-*



ին հետ գործակցաբար:

Դ.Գ. - Այո՛:

2րուցող - Որովհետեւ մեր երեկուան հանդիպումին զգալի դարձաւ որ ԵՊՀ-ն կ'ուզէ ի՛նք ըլլալ ձեռնարկողը, իսկ միւսները՝ հետեւողներ ըլլան միայն, բայց կա՛ն բաներ, որոնք դուրսէն, սփիւռքէն պէտք է ըլլան. այս կեցուածքն է որ մտահոգութիւն կը պատճառէ, խոչընդոտներ կը ստեղծէ:

Դ.Գ. - Շատ ճիշդ է, իմ փորձառութենէս պատմեմ. տարբեր երկիրներու պետական կառոյցներուն մէջ ասիկա շատ տիպական բան է, որովհետեւ անոնք, որոնք երկար ժամանակ փոփոխութեան չեն ենթարկուած, երբ կ'ուզեն նորարարական բան մը ընել, կը մերժեն եւ կը խոչընդոտեն. ասիկա պետական կառոյցներու յատուկ լայնատարած երեւոյթ է. անձնական ընկերութիւններու պարագան տարբեր է, անոնք կ'ուզեն նորութիւններ մտցնել, շահ ապահովելու համար, որքան արագ նորութեան հետեւիս, այնքան աւելի մեծ շահ կ'ապահովես: Պետական կառոյցներուն մէջ սակայն մտածելակերպը տարբեր է. շատ երկիրներ նոյն այս հարցէն կը տառապին: Անշուշտ միջոցներ կան այդ երեւոյթը շրջանցելու համար. զանոնք պիտի կիրարկենք. Ինչպէս «նորարարութեան ռահվիրա» մը գտնել, քաջալերել եւ մղել զինք որ իր գործընկերները եւս համոզէ նորութեան եւ փոփոխութեան դրական կողմերով, համոզէ որ լաւ բան է փոփոխիլը, դէպի առաջ երթալը: Այս բոլորին համար տարբեր քննարկումներ կ'ունենանք, ինչ որ շատ կարեւոր է, որովհետեւ երբ մէկ ուղղութեամբ կը մօտենաս եւ դիմադրութիւն կը տեսնես, պէտք չէ յուսահատիլ, պէտք է տարբեր միջոցներով մօտենալ եւ մարդոց համոզել որ փոփոխութիւնը սխալ բան չէ, պէտք չէ վախնալ փոփոխութենէն: Քսանհինգ տարի չէ, այս դրուածքը Սովետ Միութեան օրերէն մնացեր է, պէտք է կամաց կամաց փոխել այս բոլորը:

2րուցող - Զիչ մը անհատականին անդրադառնանք. արուեստները կը սիրէ՞ք: Ո՞ր մէկը անոնցմէ:

Դ.Գ. - Այո՛. դասական սրինգը կը սիրեմ, կը նուագեմ եւ աւարտած եմ Դամասկոսի պետական բարձրագոյն երաժշտանոցը. շատ կը սիրեմ նաեւ երգել, մանաւանդ հայերէն երգեր երգել: Իմ ամենէն սիրած պահերս երգով եւ երաժշտութեամբ յագեցած են:

2րուցող - Եւ կը սիրէ՞ք կարդալ:

Դ.Գ. - Շատ:

2րուցող - Ի՞նչ է ձեր վերջին կարդացած գիրքը:

Դ.Գ. - Ըսեմ՝ Էտուար Սաիտ:

2րուցող - Պաղեստինցի-ամերիկացի փիլիսոփայ հեղինակը:

Դ.Գ. - Իննսունական թուականներուն BBC-էն ունեցած է զրոյցներու շարք մը, որ գիրքի վերածուած է եւ կը կոչուի Representations of the Intellectual: The 1993 Reith Lectures. Այս գիրքէն կը փորձեմ հասկնալ թէ մեր այսօրուան իրականութեան մէջ ո՞վ է մտաւորականը, որովհետեւ 21րդ դարուն ամէն մարդ գիտէ կարդալ, ամէն մարդ գիտէ գրել, 18րդ կամ 19րդ դարուն պէս չէ, երբ քիչերն էին որ գրել-կարդալ գիտէին, մանաւանդ մտածել գիտէին, եւ մտաւորական կը համարուէին. մտաւորականի կերպարը շատ տարբեր է 21րդ դարուն. ես օրինակ, որ խորհրդատու եղած եմ, ես ալ մտաւորական արտադրութիւն ունեի. ուրեմն՝ ո՞վ է մտաւորականը, եւ արդեօ՞ք մենք հայերս ունինք 21րդ դարու յարմար մտաւորական, որ իրապէ՛ս գաղափար կ'արտադրէ, ռազմավարութիւն կ'արտադրէ ... Այս տեսակի հարցումներ կ'ընեմ ինքզինքիս, երբ Է. Սաիտի այս գիրքը կը կարդամ:

2րուցող - Շատ այժմեական է ասիկա. Երեւանի վերջին դէպքերուն, երբ մտաւորականները հռչակագիր մը ստորագրեցին եւ անոնց հետ նաեւ Ալլա Լեւոնեա՞ն թէ Նունէ Եսայեանը ստորագրած էր, ժողովուրդը ճիշդ նոյն հարցումը ըրաւ՝ այսօր երգի՞չն է մեր մտաւորականը:

Դ.Գ. - Իրապէ՞ս:



2րուցող - Եւ եզրայանգումի հասա՞ք:

Դ.Գ. - Այո. այն որ մտաւորականը պէտք է մօտ ըլլայ իր ժողովուրդին, մատը դրած ընկերութեան բազկերակին, անոր հոգերն ու վախերը իսկականօրէն ներկայացնէ, օրինակ ինչպէս հիմա, երեւանեան այս տագնապի օրերուն. եւ ճիշդ ուղղութիւն տայ ժողովուրդին: Տարբեր տեսակի մտաւորականներ կան, ինչպէս օրինակ պետական, կամ ինթերնետային մտաւորականներ, բայց ժողովուրդին մօտ կեցած մտաւորականը ... կը տեսնենք, չէ՞ արդէն այս օրերուն:

2րուցող - Կը տեսնենք, ճիշդ է, բայց արդեօք կա՞յ մէկ անուն գոնէ, որուն հանդէպ ժողովուրդին բոլոր խաւերը ունենան այնքան համարում, որ մտիկ ընեն զինք եւ անսան անոր խօսքին: Կա՞յ:

Դ.Գ. - Դժուար է ըսելը:

2րուցող - Երեսունական, քառասունական թուականներուն եւ աւելի ուշ կային նման մարդիկ, մտաւորականներ, որոնք բան մը կ'ըսէին, եւ ժողովուրդը հաւատք կ'ընծայէր: Այսօր:

Դ.Գ. - Դժուար է: Շատ դժուար: Բայց ասիկա միայն հայ հասարակութեան հարցը չէ. եթէ այլ հասարակութիւններու նայինք, օրինակ հիմա Ամերիկայի ընտրական պայքարին, հոն ալ նոյն ձեւով կը տառապին, որովհետեւ ներկայացուած գաղափար չկայ, մանր բաներով զիրար կ'ամբաստանեն, կը նախատեն, բայց գաղափար չկայ, մէկը չկայ որ բացատրէ թէ Ամերիկան ո՛ր կ'երթայ, ո՛ր պիտի երթայ: Այսինքն 21րդ դարու ինթերնետային այս արագ օրերուն, ասիկա ընդհանուր հարց է, որ մենք շատ սուր ձեւով կը տեսնենք մեր իրականութեան մէջ. պէտք է ասոր դէմ կանգնիլ, որովհետեւ մենք պէտք ունինք գաղափարներ արտադրող մարդոց:

2րուցող - Այլ խօսքով՝ պէտք է պեղել, գտնելու համար մտածելու ունակութիւն ունեցող երիտասարդներ, ինչ որ բաւական դժուար բան է:

Դ.Գ. - Դժուար է, այո, բայց ա՛յդ ալ մեր

ծրագիրներուն մաս կը կազմէ՝ թափանցել հասարակական միջավայրի, տարբեր տեսակի ընկերութիւններու մէջ, կապեր հաստատել NGO-ներու հետ (non governmental organizations), որոնք իրապէ՛ս կը փորձեն ժողովուրդին հոգերով զբաղիլ եւ այլն, կը փորձենք անոնց հետ նոր տեսակի յարաբերութիւններ մշակել, բան մը որ մինչ այս չէր եղած:

2րուցող - Հոյակապ ծրագիր է ասիկա: Կա՞յ բան մը որ կ'ուզէք մեր այս գրոյցին աւելցնել:

Դ.Գ. - Շատ շնորհակալ եմ այս գրոյցին համար: Եգիպտոսը մեզի շատ սրտամօտ համայնք է եւ ի՛նչ որ կրնանք ընել օգտակար դառնալու համար, ուրախ կ'ըլլանք ընդառաջելով:

2րուցող - Վերջին հարցում մը. կա՞յ բան մը, անհատական իր մը, որ ձեզի հետ բերած էք, ձեր գրասենեակին մէջ դնելու, որպէսզի ձերը դարձնէ այդ սենեակը:

Դ.Գ. - Ո՛չ, նման բան չունիմ, որովհետեւ շատ շարժող անձ մըն եմ, Հայաստանը ութերորդ երկիրն է ուր կ'ապրիմ, հետեւաբար ինչ որ ունիմ, մէջս է եւ հետոս կը տանիմ տեղէ տեղ. ինքնութեանս շատ մեծ մաս կը կազմէ հայ ըլլալը, իսկ ՀԲԸՄ-ի անդամ ըլլալը ինծի տուած է այնպիսի արժանիքներ, որոնք մասնագիտական կեանքիս մէջ շատ օգտակար եղած են, ինչպէս յարգանքը ուրիշին հանդէպ եւ գործին նուիրուած ըլլալը. ասոնք կ'ուզեմ փոխանցել:

2րուցող - Այսօր օրինակ, երբ հալէպահայը կը կենայ իր քաղաքը, տունն ու տեղը լքելու պարտադրանքին առջեւ, կը մտածէ թէ ի՛նչ կրնայ տանիլ հետը, բան մը, որ իր կեանքը կարենայ խտացնել: Պէտք է, ձեր ըսածին պէս, սորվիլ տանիլ այն, ինչ որ մարդուն մէջն է, ներաշխարհին մէջ:

Շնորհակալութիւն այս հաճելի գրոյցին համար:

«Տ»

ՀԲԸՄ-Ի ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆԸ

Թերեւս այսօր, թուանշային գիտութեան եւ անոր ընձեռած բազմաթիւ դիրքութիւններուն առջեւ անխմաստ թուի խօսիլ իրողական մատենադարաններու մասին: Բայց ճիշդ պիտի չըլլայ ասիկա: Նոյնիսկ ամենէն յառաջացած երկիրներու մէջ արդէն սովորական եւ ընդունուած իրողութիւն է, որ գիրքին փոխարինող երբեք պիտի չըլլայ, բազմաթիւ պատճառներով: Գիրքերը կը շարունակեն պահել իրենց հմայքը, իսկ մատենաները՝ աւելի:

Երբ մատենադարան կ'ըսենք, անմիջապէս բառը կը կապենք Երեւանի Մաշտոցի անուան մատենադարանին հետ, որ հայկական հին ձեռագիրներուն, մատենաներուն եւ մանրանկարչութեան ամենէն մեծ շտեմարանն է: Սփիւռքի տարածքին սակայն ունինք քանի մը նոյնքան կարելոր, թէեւ ոչ նոյնքան հանրածանօթ մատենադարաններ, ինչպէս օրինակ Վենետիկի Մխիթարեաններուն, Վիեննայի Մխիթարեաններուն, Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանքին «Ս. Ներսէս Շնորհալիի անուան», Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Կիւլպէնկեան հաստատութեան մատենադարանները:

Ասոնց կարգին կարելի է յիշել նաեւ ՀԲԸՄ-ի Նուպարեան մատենադարանը, Փարիզի մէջ:

Այս մատենադարանը հիմնադրուած է 1928 թուականին, ՀԲԸՄ-ի հիմնադիր Պօղոս Նուպար Փաշայի կողմէ: Մատենադարանը կը պարփակէ արխիւային մեծ հարստութիւն, ինչպէս տասը հազարէ աւելի լուսանկարներ, Համաշխարհային Առաջին պատերազմէն անմիջապէս առաջ, ընթացքին եւ անմիջապէս ետքը առնուած, 19րդ դարու մամուլի հազար անուն, եւ անշուշտ՝ հայոց պատմութեան առընչուած քառասուն հազար հաշուող գիրքեր եւ մատենաներ:

Մինչ կարգ մը մատենադարաններու արխիւները փակ են հանրութեան համար, ինչպէս Երուսաղէմի Պատրիարքարանի, Զօրեան հիմնարկի կամ Պոսթընի ՀՅԴ-ի,

ՀԲԸՄ-ի Նուպարեան մատենադարանի արխիւները տասնամեակէ մը աւելի է որ բաց են հանրութեան:

Մատենադարանը սերտ յարաբերութեան մէջ է Երեւանի Մաշտոցի անուան մատենադարանին հետ:

Սփիւռքի տարբեր գաղութներէ ստացուած գիրքերն ու արխիւները կը ճոխացնեն Նուպարեանի հաւաքածոն:

Նուպարեան մատենադարանը ունեցած է քանի մը տնօրէններ, որոնց վերջընթերցողն է Դոկտ. Ռէյմոն Գեորգեան. իրմէ առաջ տնօրէններ եղած են Արտաշէս Գարտաշեան (եգիպտահայ), Արմենակ Սալմասլեան եւ Արամ Անտոնեան: Դոկտ. Ռէյմոն Գեորգեանէն վերջ այժմու տնօրէնն է Դոկտ. Պորիս Աճեմեան:

Համաշխարհային Երկրորդ պատերազմին հիթլերականները Նուպարեանի արխիւներն ու գիրքերը Գերմանիա տարած են, բայց 1947 թուականին կարելի եղած է անոնցմէ մաս մը վերադարձել:

Արամ Անտոնեան, որ այդ օրերուն Նուպարեանի գրադարանապետն էր, գրած է «Նուպարեան Մատենադարանի Գերման Թալանը» անունով յօդուած մը որ լոյս տեսած է «Միութիւն»ի մէջ: Այս թերթը եղած է ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի պաշտօնաթերթը (Մայիս 1947, թիւ 207, էջ 1):




Արամ Անտոնեան

Այս յօդուածին մէջ Արամ Անտոնեան մանրամասն կը պատմէ թէ ինչպէ՛ս 1941-ին գերման զինուորական մը կու գայ մատենադարան եւ տեղեկութիւններ կ'ուզէ: Հեղինակը աւելի ուշ պիտի իմանար որ արդէն Փարիզի ռուսական, լեհական եւ հրեական գրադարանները Գերմանիա տեղափոխուած են:

Ա. Անտոնեան կասկածելով, անմիջապէս կը սկսի արժեքաւոր գիրքերէն մաս մը նկուղ իջեցնել, ուրիշ մաս մըն ալ փոխադրել Ա. Կելրեկի յարկաբաժինը: Իրապէս ալ



ՀԱՐՄ-Ի ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ



ոստիկաններ կու գան եւ մատենադարանին գիրքերը կը լեցնեն 168 սնտուկներու մէջ, որոնցմէ 18 սնտուկներ կը տանին: Մնացեալ սնտուկները կը մնան սպասողական վիճակի մէջ:

Տարւածներուն մէջ եղած են 1343 հատորներ, որոնցմէ 917 հայերէն եւ 423 եւրոպական լեզուներով գիրքեր, 481 պարբերականներ եւ 33 ձեռագիր մատեաններ:

Դժբախտաբար այս յօդուածին մէջ չէ

յիշուած որ տարուած սնտուկներէն որքա՞նը վերադարձուած է: Թերեւս այլ տեղ մը, մամուլի մոռցուած էջի մը մէջ յիշուած ըլլայ ատիկա, սակայն մեր հասողութեան տակ չէ:

Բայց յստակ է որ Պերլինի Փրուսիական մատենադարանը բաւական հարուստ հաւաքածոյ մը ունի հայերէն գիրքերու եւ մատեաններու: Մտածելու նիւթ է:

ՇԱՄ-ԷԼ-ՆԵՍԻՄԻՐԸ ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ ՄԷՋ

Երկուշաբթի 2 Մայիս 2016ին Շամ-Էլ-Նեսիմին ոչ շատ մեծ թիւով անդամներ ու համակիրներ եկած էին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ դալարագեղ պարտեզին մէջ նշելու այդ զուտ եգիպտական ու բոլորին սիրելի տօնը:

Շամ-Էլ-Նեսիմը կրնանք համարել աշխարհի հնագոյն տօներէն մէկը, որ դարեր շարունակ տօնուած է ու կը տօնուի տակաւին:

Ըստ եգիպտացիներուն, ամառւան եղանակը կը դիմաւորուի բացօթեայ վայրեր յաճախելով, կանանց սոխ, գունաւոր հաւկիթ, հազար եւ

աղուած ձուկ ուտելով:

Անցած են այն օրերը երբ Շամ-Էլ-Նեսիմին ասեղ ձգելիք տեղ չէր ըլլար հայկական ակումբներուն վրանածածկ պարտեզներուն մէջ, վաղ առաւօտէն մինչեւ ուշ գիշեր: Հիմա շատեր կը նախընտրեն ծովափը գտնուիլ Շամ-Էլ-Նեսիմին:

Այս տարի, բարեբախտաբար, օդը հեղձուցիչ չէր ու ներկաները հաճելի պահեր անցուցին մինչեւ իրիկուն:

Սօսի Ներսէսեան Յակոբեան

ՃԱՏՐԱԿԻ ԱՄԱՌ-ՆԱՅԻՆ ԵՐԵՎԱՅ ՄԸ ԿՈԿԱՆԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Շաբաթ 16 Յունիս 2016-ին, ամառնային մեղմ երեկոյեան մը, հայ գաղութի տարբեր տարիքի անդամներ, անգամ մը եւս հաւաքուեր էին զիրենք հիւրընկալող Կոկանեան Սրահին մէջ, միասնաբար ճատրակ խաղալու դիտաւորութեամբ: Երեկոյթին կազմակերպիչն էր Գահիրէի ԶԲԸՄի ԶԶԶ- ԶԲԸՄ Եգիպտոսի ճատրակի Ակումբը:

Բարեկամական բնոյթ ունեցող սոյն երեկոյթը հրապուրած էր տարբեր տարիքի եւ մակարդակի 22 մասնակիցներէ բաղկացած խմբակ մը, որուն անդամները բոլորն ալ նոյն սիրով եւ խանդավառութեամբ համակուած էին հայկական մշակոյթին հետ սերտօրէն առնչուող այս իմացական խաղով:

Հաւաքը տեղի ունեցաւ արհեստավարժ (փրոֆեսիոնալ) եւ բարեկամական ջերմ մթնոլորտի մը մէջ: Մէկ կողմէն պահպանելով դէմ առ դէմ անհատական խաղացողներու լրջութիւնը, մինչ միւս կողմէն վերջնական յաղթանակ տանողը նկատելով որպէս արդիւնք՝ խումբին բոլոր մասնակիցներուն տարած միացեալ ջանքերուն: Համաձայնաբար, մասնակիցները բաժնուած էին երկու խումբերու, ըստ իրենց կրած ժապաւեն երիզներու գոյնին՝ կանաչ եւ վարդագոյն: Մրցումները կը կատարուէին խաղաշրջաններով բուրգի մը աստիճաններուն նման: Խաղացողներուն թիւը կը նուազէր իւրաքանչիւր խաղաշրջանի հետ, հասնելով այսպէս բուրգին գագաթը, ուր կը մնար միայն յաղթական կողմը:

Այս բոլոր յիշատակելի պահերը յաւեր-



ժացուած են շնորհիւ Պր. Գօգօ Շամամեանի սիրայօժար նկարահանումներուն:

Սոյն ձեռնարկին գլխաւոր նպատակն էր զօրացնել խմբական ոգին, ինչպէս նաեւ սեր եւ հմտութիւն ջամբել ճատրակի նկատմամբ:

Երեկոյթը պսակուեցաւ յաղթական կանաչ խումբին ի պատիւ տօնախմբութիւններով, որոնց միացաւ նաեւ Կոկանեան Սրահի ատենապետ՝ Դոկտ. Գեորգ Երզնկացեան եւ Սրահի նախորդ ատենապետ՝ Պր. Նուպար Սիմոնեան:

Յաղթական խումբը կը բաղկանար հետեւեալներէն.

Ալէք Վարժապետեան
Անդրանիկ Յակոբեան
Արին Սիմոնեան
Դանիէլ Զալալեան
Էտի Գասապեան
Էլէնա Մովսեսեան
Գեորգ Աւանեան
Խաչիկ Գասապեան
Ֆիլիպ Աբրահամեան

Վիվիան Աւագեան: շաբ.էջ 23





ՃԱՀԵԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Ուրբաթ, 13 Մայիս 2016-ի կեսօրուան 12ին, Դոկտ. Յերմինե Վարժապետեան երրորդ դասախոսութեամբ մը ելոյթ ունեցաւ «Ինքնաճանաչում – Ինքնաբութում» հետաքրքրական նիւթով, որուն մէջ մասնագիտացած է ան:

Յարգելի բժշկուհին մէկ ու կէս ժամուան ընթացքին կարողացաւ ներկաներուն ուշադրութիւնը կեդրոնացած պահել այս բարդ նիւթին վրայ, իր շատ հաճելի եւ հեզասահ խօսելաոճին շնորհիւ:

Ան ամփոփ կերպով անդրադարձաւ նախորդ երկու դասախոսութիւններուն ընթացքին փոխանցած տեղեկութիւններուն, ապա անցաւ պարզելու առողջ – երջանիկ կեանք մը վայելելու գաղտնիքը:

«Մարդ արարածը ստեղծուած է մաքուր ու անբիծ», սկսաւ Դոկտ. Յերմինե, «նիւթապաշտ կենցաղը կ'ապականէ ու կ'աղաւաղէ այս հոգեկան բնածին մաքրութիւնը», աւելցուց ան:

Սկիզբէն ի վեր մարդը ապրած է ցեղախումբերու մէջ, կառավարուած ուրիշներու պարտադրած օրէնքներով, եւ առանց մտածելու ենթարկուած է հաւաքականութեան ճնշումներուն: Հակառակ որ կը կարծենք թէ մեր կեանքի ընթացքին ազատօրէն կը մտածենք, որոշումներ կ'առնենք – կ'աշխատինք գործադրել զանոնք, սակայն «ցեղախումբի» քօլարկուած ճնշումին ենթակայ ենք տակաւին, լրատուական միջոցներուն օրն ի բուն, անընդհատ հոսքին պատճառով:

Շրջապատը կը կառավարէ իր անդամները «վախ»ի միջոցով՝ վախնալ քննադատելէ, մերժուելէ, ծաղրուելէ, մեկուսացումէ:



Հաւաքականութեան պատկանելու համար մարդ արարածը ստիպուած է ենթարկուելու մեծամասնութեան փափաքին:

«Վախ»ը այն անտեսանելի գաւազանն է, որ հունի մէջ կը պահէ ժողովուրդները. բայց առողջութեան ամենամեծ թշնամին է «վախ»ը, որ պատճառ կը դառնայ ոսկորի, մկաններու, հաստ աղիքի, երիկամունքի, արեան ճնշումի-ողնայարի հիւանդութիւններուն:

Մարդուն երկրորդ թշնամին «բարկութիւն»ն է, որ մարմնական բազմաթիւ հիւանդութիւններու պատճառ կը դառնայ, գլխաւորաբար լեարդի-շաքարախտի: Յարգելի բժշկուհին խորհուրդ տուաւ օգուտ քաղել մեզի վնաս հասցնողներէն, բան մը սորվիլ այն դէպքերէն, որոնք բարկացուցած են մեզ-դառնալ աւելի զօրաւոր:

Ամեն անձ պետք է գիտակցի թէ ինքն է պատճառը իր կեանքի բոլոր բարեբաստիկ թէ չարաբաստիկ պատահարներուն: Պետք է մեր ձախողութիւններուն համար ուրիշները կամ պարագաները մեղադրենք:



«Եթե կ'ուզենք որ ինքնաբուժումը ազդեցութիւն ունենայ, պետք է ներող ըլլանք, ոչ թէ որովհետեւ դիմացինը անպայման ներուելու արժանի է, այլ որպէսզի մեր ներքին անդորրը գտնենք: Ներելով է որ մենք զմեզ կը բուժենք», ըսաւ շնորհալի դասախօսուհին մեծ համոզումով:

«Սեր»ը բուժումի անփոխարինելի միջոցն է: Ամէն մարդ պետք է նախ իր անձը սիրէ, որպէսզի կարենայ ուրիշները սիրել: Կար ժամանակ երբ ինքզինք սիրելը անձնասիրութիւն եւ թերութիւն կը նկատուէր: «Յիմա կ'ըսեմ ձեզի որ սերը կը վսեմացնէ հոգին, իսկ անձին հանդէպ սերը ճառագայթի նման կը ցոլայ իր շուրջիներուն վրայ», ըսաւ Դոկտ. Յերմին:

Ան հակիրճ կերպով անդրադարձաւ նաեւ մարմնի ուժին եօթը կեդրոններուն՝ Chakra-ներուն: «Սեր ուժի կեդրոնները



պետք է մաքուր ու բաց ըլլան, որպէսզի կարենանք հաղորդակցութեան մէջ մըտնել Աստուծոյ հետ – ուղղութիւն ստանալ Անկէ: Միայն երբ կարենանք հաւասարակշռութիւնը վերահաստատել մեր մտային – մարմնային կեանքին մէջ, պիտի ունենանք առողջ – երջանիկ կեանք», եզրակացուց Դոկտ. Յերմին:

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ մտիկ ըրին այս խորթին, սակայն պարզ կերպով ներկայացուած կեանքի հանդէպ նոր մօտեցումը: Ոմանք անձնական հարցերով դիմեցին Դոկտ. Յերմինէին, որ մեծ ուրախութեամբ բացատրութիւններ տուաւ:

Աւարտին, ակումբի Տիկնանց Յանձնախումբին կողմէ Տիկ. Մարլին Աւանտան յիշատակի նուէր մը յանձնեց շնորհալի դասախօսուհին:

Սոսի Ներեւեան-Յակոբեան

շաբ.էջ 21-էն

ՃԱՏՐԱԿԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ ՄԸ ԿՈԿԱՆԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Բոլոր մասնակիցները պարգևատրուեցան ԶՀԶ- ԶԲԸՄ ճատրակ Եգիպտոս-ի կողմէ յուշանուէրներով: Ձեռատետրեր՝ (block notes) բոլորին (սիրայօժարօրէն նուիրուած «Նուպար Տպագրատուն»էն), գդակներ՝ յաղթական Կակաչ Խումբի անդամներուն եւ բաժակներ՝ (mugs) ԶՀԶ-ԶԲԸՄ-ի ճատրակի ուսուցիչներուն եւ ձեռնարկը կազմակերպողներուն՝ Տեարք Էտի Գասապեանի եւ Խաչիկ Գասապեանի:

«Շնորհաւորութիւններ յաղթական խումբին: ԶՀԶ-ԶԲԸՄի կողմէ մեծապէս կը գնահատենք այս ազնիւ գործակցութիւնը եւ շնորհակալութիւն կը յայտնենք Կոկանեան Սրահին սոյն ձեռնարկը հիւրընկալելուն համար»: Այս հակիրճ խօսքով է որ ԶՀԶի Եգիպտոսի դեսպանուհի Տիկին Աննա Տո-

լապճեան-Թրայեան հանդէս եկաւ, ներկաներուն ջերմ ծափողջոյններուն տակ, ու այսպիսով հանդիսութիւնը հասաւ իր աւարտին:

ԶՀԶ-ԶԲԸՄ Եգիպտոս կը ծանուցանէ թէ յառաջիկայ աշնան, ճատրակ մակարդակ 3-ի համար, արձանագրութիւնները բացուած են: Մանրամասնութեանց համար կը խնդրուի հեռաձայնել Պր. Խաչիկ Գասապեանի 01222501471 կամ «email»ով khachigkassabian@gmail.com, տալով հետեւեալ տեղեկութիւնները. ամբողջական անուն, mobile-ի թիւ, E-mail-ի հասցէ, Facebook-ի կամ Skype-ի անուն, տարիք:

*ԶԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝
Անայիս Ծիգմեճեան*



ԱՂԵՔՍԱՆՈՒԹԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՊԱՍՔԷԹ ՊՈԼԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

22 Յուլիսին բացումը կատարուեցաւ 2016ի Եգիպտահայ պասքէթ պոլի մրցաշարքերուն առաջինին՝ Աղեքսանդրիոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եռօրեայ մրցումներուն, մասնակցութեամբ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մարզական հիւնդ ակումբներուն:

Սոյն մրցաշարքը կը վայելէր հովանաւորութիւնը Գերշ. Տ. Աշոտ Ս. Եպս. Մնացականեանի՝ Բարեխնամ Առաջնորդ Եգիպտոսի Հայոց Թեմին եւ Նախագահութիւնը Տէր եւ Տիկին Հրաչ Սիմոնեանի՝ պատուոյ ատենապետ Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ:

Մրցաշարքին ներկայ էր Աղեքսանդրիոյ հայոց հոգեւոր հովիւ Արթ. Տէր Գրիգոր Սուրատեանը:

Ուրբաթ, 22 Յուլիսին առաջին մրցումը Աղեքսանդրիոյ երկու ակումբներուն՝ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն եւ ՅՄԸՄ Կամբին միջեւ էր: Տրուած ըլլալով որ միջակ մակարդակի վրայ երկու խումբերուն ուժերը գրեթէ հաւասար էին, ուստի մրցումը հետաքրքրական էր, մանաւանդ որ երկրորդ կիսախաղին աւարտին արդիւնքը 29-24 էր ի նպաստ հիւրընկալ խումբին:

Երկու խումբերուն մէջ պատանի տարրեր կային, որոնք տակաւին բոլորովին չէին կարողացած միաձուլուիլ աւելի երեց ու փորձառու մարզիկներուն հետ: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻին 61-54 արդիւնքով ու յաղթական խումբը անմիջապէս անցաւ Կիրակի օրուան աւարտական մրցումին:

Օրուան երկրորդ խաղը Գահիրէէն ՅՄԸՄ Արարատին եւ Սրբուհի Թերեզայի խումբերուն միջեւ էր: ՅՄԸՄ Արարատի խումբը իր երեց խմբապետ Նորայր Մխտիկեանէն զատ, բաղկացած էր երիտասարդներէ ու պատանիներէ, որոնք արագ խաղարկութեամբ սկիզբէն իսկ տիրապետեցին խաղին:

Սրբուհի Թերեզայի խումբը, հակառակ պատասխանատու Գրիգոր Միքայելեանի երկար տարիներէ ի վեր թափած ջանքերուն, չէ կարողացած իր մակարդակը բարելաւել:

Մրցումը աւարտեցաւ 72-52 արդիւնքով

ի նպաստ ՅՄԸՄ Արարատին:

Շաբաթ 23 Յուլիսին միայն մէկ մրցում կար յայտագրին վրայ, Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն եւ ՅՄԸՄ Արարատին միջեւ:

Աղեքսանդրիոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ նուիրեալ ատենապետ Պր. Կարապետ Թօսունեան խօսք առաւ ու բարի գալուստ մաղթեց բոլորին, ապա ներկայացուց մրցող խումբերուն մարզիկները, մարզիչներն ու պատասխանատուները, նաեւ իրաւարարներն ու սեղանին պատասխանատուները:

Այլեւս անցած են այն օրերը երբ մինչեւ իրաւարարին վերջին սուլիչին հնչելը սիրտհատնումի պահեր կ'ապրէին երկու ակումբներուն հանդիսատեսները, երբ մի քանի երկվայրկեանի ընթացքին ճակատագիրներ կը փոխուէին, երբ անկարելի էր գուշակել թէ ո՞վ պիտի տիրանար բաժակին:

Հակառակ որ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը հազիւ 10 փորձ ըրած էր անցեալ տարուան վերջին մրցաշարքէն ի վեր, ակումբին պասքէթ պոլի դաշտը Փետրուար ամիսէն ի վեր հիմնովին վերանորոգման ենթակայ եղած ըլլալուն պատճառաւ: Սակայն ներդաշնակ ու բարձրորակ խումբ մը, նոյնիսկ սակաւ փորձով կրնայ յաղթական հանդիսանալ:

Արարատի տղաքը յաղթելու հեռանկարով դաշտ իջան ու իրենց կարելին ըրին: Սակայն ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը մրցումին սկիզբէն տիրապետեցին խաղին, թեպէտ արդիւնքի առաւելութիւնը քիչ պահելով: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 58-48 արդիւնքով:

Հիւրընկալ ակումբին Տիկնանց Յանձնախումբի աշխոյժ անդամուհիները, նոյն գիշերը պարանցիկ երեկոյ մը կազմակերպած էին, ծովեզերքը գտնուող Windsor Hotel-ին «Roof-top»ը, ուր մարզիկները ու Գահիրէէն ժամանած մեծ թիւով մարզասերներ Աղեքսանդրիոյ հայ համայնքին անդամներուն հետ, հիանալի ժամանակ անցուցին ծովամերձ տանիքին վրայ, վայելելով DJ Այգ Գալայճեանին հրամցուցած երաժշտութիւնը:

Կիրակի 24 Յուլիսի աւարտականին հասած էին երկու ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐները: Մակարդակներու խիստ տարբերութեան պատճառով խաղը չկարողացաւ ներկաներուն ուշադրութիւնը գրաւել: Գահիրէի խումբին մարզիչը հին խաղացողներուն կողքին դաշտ իջեցուց պատանիներ, որոնք այս տարի միացած էին երեք խումբին, ու այսպէսով առիթը ընծայեց անոնց որ հասարակութեան ներկայութեան խաղան:

Մրցումը աւարտեցաւ 79-58 արդիւնքով ի նպաստ Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐին, որ արժանացաւ Տիկ. Անի Արթինեանի ու իր զւակներուն՝ Օր. Դանիայի եւ Տոքթ. Վահէի նուիրած բաժակին իր ամուսնոյն եւ հոր՝ ողբացեալ Արթո Արթինեանի յիշատակին:

Մրցաշարքին մետալները նուիրուած էին Տէր եւ Տիկին Վարդ Ալեքսանեանի կողմէ:

Վարձքը կատար Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐի խումբին պատասխանատու Յակոբ Գարակեօզեանին, օգնական Զրիս Սիմոնեանին, մարզիչ Ամր Աշուրին եւ օգնական մարզիչ Ալաա Չահրանին, որոնց ճիգերուն շնորհիւ խումբը տիրացաւ 2016ի առաջին բաժակին:

Վարձքը կատար Աղեքսանդրիոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐի վարչութեան ու Տիկնանց Յանձնախումբին, յաջող մրցաշարք ու պարահանդէս մը կազմակերպելու համար:

Սոսի Ներսէտեան Յակոբեան



ԱՂԵՔՍԱՆՔՐԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՔԵՐՄԷՍԸ

Աղեքսանդրիոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ արիւնքն ու արեւոյշները իրենց տարեկան քերմէսը կազմակերպեցին 24 Յուլիս 2016-ին, ակումբին դալարագեղ պարտէզին մէջ, մօտ 150 անձերու ներկայութեան:

Մօտ 22 այլազան զուարթ խաղեր եւ մրցումներ կազմակերպուած էին հիւրերուն համար եւ հաճելի անակնկալներ վերապահուած՝ յաղթականներուն: Այս առիթով յատկապէս հրաւիրուած էին ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ, Յունական ակումբի եւ «Wadi-el-Nil»ի բոլոր սկաուտները եւ արեւոյշները:

Համադամ ուտեստները պատրաստուած էին ակումբին Տիկնանց Յանձնախումբին

կողմէ: Խաղերը եւ խանդավառիչ երաժշտութիւնը շարունակուեցան մինչեւ ուշ գիշեր, երբ տեղի ունեցաւ աւանդական վիճակահանութիւնը եւ բախտաւորները ստացան իրենց նուէրները:

Իսկապէս զուարթ եւ հաճելի երեկոյ մըն էր:

Վարձքը կատար կազմակերպիչներուն եւ Աղեքսանդրիոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ բոլոր սկաուտներուն եւ արեւոյշներուն:

*ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝
Անայիս Ծիգմէճեան*



ՍՐԲՈՒՀԻ ԹԵՐԵՋԱ ԱԿՈՒՄԲԸ ԿԸ ՊԱՏՈՒԷ ՀՀՀ-ՀԲԸՄ. ԵԳԻՊՏՈՍ-Ի ՀԱՅԵՐԷՆ ԼԵՋՈՒԻ Ա. ՇՐՋԱՆԻ ՇՐՋԱՆԱԴՐՏՆԵՐԸ

Առաջին քայլ-Առաջին Յաջողություն:

Այս ոգիով է որ Շաբաթ 12 Յունիս 2016-ին, Սրբուհի Թերեզայի Հայ Կաթողիկե Ակումբին մեջ, տեղի ունեցան ՀՀՀ-ՀԲԸՄ. Եգիպտոսի Հայերեն լեզուի Առաջին շրջանի

սի «Hybrid» հայերեն լեզուի դասընթացներուն մասին եւ ահա կրկին հոս ենք այսօր եւ արդեն միասնաբար կը տոնախմբենք մեր յաջողությունը: Մենք յաջողութեան հասանք որովհետեւ միացած էինք նոյն սիրով, սեր եւ նուիրում հայ



շրջանաւարտներուն հանդիսութիւնները: Հրաւերները ազնւօրէն առաքուած էին Եգիպտոսի հայ Կաթողիկե համայնքի վիճակաւոր՝ Գերապայծառ Գրիգոր Օգոստինոս Գուսանի կողմէ, որպէս քաջալերանք եւ խանդավառութիւն ՀՀՀ-ՀԲԸՄ-ի եւ բոլոր ուսանողներուն:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Սրբուհի Թերեզա Ակումբի շքեղօրէն զարդարուած գլխաւոր սրահին մէջ, ճոխ սեղաններու շուրջ, պաշտօնական՝ եւ միանգամայն շէնշող մթնոլորտի մը մէջ:

«Քանի մը ամիս առաջ էր միայն որ մենք հոս էինք, այս նոյն սրահին մէջ եւ կը յայտարարէինք Եգիպտոսի

լեզուին հանդէպ»: Սոյն ջերմ խօսքերով է որ հանդիսութեան բացումը կատարեց Եգիպտոսի ՀՀՀի դեսպանուհի՝ Տիկին Աննա Տոլապճեան-Թրայեանը:

«ՀԲԸՄ-ը հիմնուեցաւ 110 տարի առաջ Պօղոս Նուպար փաշայի կողմէ, ապագայի տեսլականով: Այժմ ՀԲԸՄ-ՀՀՀ-ը կը կրէ այդ մտապատկերի ջահը, հայկական դասընթացներուն ընդմէջէն, գիտութեան եւ կրթութեան լոյսը տարածելով համայն աշխարհի մէջ» յայտարարեց Եգիպտոսի ՀԲԸՄի Շրջանակային Յանձնաժողովի պատուոյ ատենապետ՝ Տիար Պերճ Թերզեան. Ապա յարեց. «Կը շնոր-

հաւորենք շրջանաւարտները եւ կը մաղթենք նորանոր յաջողութիւններ իրենց յաջորդ դասընթացքներուն մէջ եւս»:

«Բարի գալուստ եւ շնորհաւորութիւններ բոլոր ՀՀ-ՀԲԸՄի դասընթացքներու շրջանաւարտներ» ըսելով, խօսք առաւ հանդիսութիւնը հիւրընկալող՝ Գերապայծառ Գրիգոր Օգոստինոս Գուսան: «Մենք հոս բոլորս, Սրբուհի Թերեզայի մէջ, շատ ուրախ ենք այսօր՝ ձեզ մեր մէջ ունենալու: Որպէս գործակցութիւն ՀՀ-ՀԲԸՄի հետ եւ նեցուկ կանգնելու համար ձեր ուսման, այստեղ, Սրբուհի Թերեզայի մէջ, ամառնային շրջանին, տեղի պիտի ունենան շաբաթական հայերէնի դասընթացքներ: Այս պատճառ պիտի ըլլայ որ զօրացնէք ձեր հմտութիւնը եւ պատրաստ ըլլաք աշնան՝ յաջորդ շրջանի դասընթացքներուն համար» յարեց ան: Սրբուհի Թերեզայի վարչական անդամներէն Տեարք Գրիգոր Միքայէլեան եւ



Թորոս Խաչատուրեան միացան Գերապայծառ հօր՝ յայտնելու համար իրենց շնորհաւորութիւնները:

Ուսանողները շատ գոհ ու երջանիկ էին տիրող զուարթ մթնոլորտէն, ճաշէն, անոնք նոյնիսկ տօնեցին իրենց դասընկերներէն մէկուն տարեդարձը, հաճոյք առնելով միախառնուած լեզուներով խօսիլ, եւ սակայն միշտ ջանալով իրենց խօսքը «հայերէնով ըսել»:

*ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝
Անայիս Ճիգմեճեան*

ՄԱՀ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆ ԷԼՍԻ ՊԵՅԼԵՐԵԱՆԻ

Գահիրէի ՀԲԸՄ-ի սակաւաթիւ հաւատաւոր մեկենասներէն՝ Էլսի Պէյլերեան մահացաւ 29 Մայիս 2016-ին «Այծեմնիկ»ի Կարապետ Աղա Աբիկեան Հանգստեան Տան մէջ, յառաջացեալ տարիքի մշտական տկարութեան հետեւանքով: Ողբացեալ Էլսին Գահիրէի ՀԲԸՄ-ի հաւատաւորներէն էր, որ կ'աշխատէր երբեք չփախցնել Միութեան կազմակերպած որեւէ ձեռնարկ կամ հանդիսութիւն:

2009 թուականի վերջերուն Հանգստեան Տուն փոխադրուելէ առաջ, իր ունեցուածքին մեծ մասը նուիրած էր Գահիրէի ՀԲԸՄ-ին:

Հանգուցեալին յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ 30 Մայիսին, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ, որմէ յետոյ թաղուեցաւ Հելիոպոլսոյ Ամենայն Սրբոց գերեզմանատունը:

Ամենակալէն կը հայցենք հանգիստ իր հոգւոյն եւ սփոփանք բոլոր սգակիրներուն:



«Տ»



ՄԱՀ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱԴՈՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՄ ԹՐԱՅԵԱՆԻ



Անցեալ Յուլիս 16-ին եգիպտահայութիւնը խոր ցնցում կրեց, անժամանակ շիջումովը իր զաւակներէն բոլորին սերը եւ համակրանքը վայելող Գեղամ Թրայեանի:

Հանգուցեալին թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ 18 Յուլիսին, Հելիոպոլսոյ Ամենայն Սրբոց Գերեզմանատան մատրան մէջ, որմէ յետոյ մարմինը ամփոփուեցաւ իր ընտանեկան դամբանին մէջ, ստուարաթիւ բազմութեան մը ներկայութեան:

«ՏԵՂԵԿԱՏՈՒ»ն իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալին հարազատներուն՝ կողակիցին՝ Տիկին Աննա Թրայեանի, դուստրերուն՝ Լոռնայի եւ Տէր եւ Տիկին Ժոզէ եւ Էտնա Գարեբայի, մօրը՝ Տիկին Ժորժէին, եղբօր՝ Տէր եւ Տիկին Վիգէն եւ Սիմա Թրայեաններուն եւ զաւակներուն, ինչպէս նաեւ քրոջ՝ Տէր եւ Տիկին Արթօ եւ Նուարդ Ճճճեաններուն եւ զաւակներուն:

Հանգիստ իր հոգւոյն եւ մխիթարութիւն իր հարազատներուն եւ բոլոր սգակիր պարագաներուն:

Իր բարի, ազնիւ եւ ընկերական մարդու յիշատակը մեր սրտերուն մէջ քանդակուած պիտի մնայ:

* * *

Գեղամ Թրայեան ծնած է 1952-ին: Նախնական ուսումը Գալուստեան Ազգային Վարժարանին եւ երկրորդականը Տոն Պոսքօ Վարժարանին մէջ ստանալէ յետոյ, 1972-ին մեկնած է հայրենիք, ուր Երեւանի Կարլ Մարքսի անուան Պոլիտեխնիկական Հիմնարկի (Ինստիտուտի) դասընթացքներուն հետեւած եւ փայլուն արդիւնքներով աւարտած է 1977-ին, վկայուելով որպէս ճարտարապետ:

Բարձրագոյն հիմնարկը, ուր յաճախած է, Գեղամին աւարտական ճարտարապետական նախագիծը, Հիմնարկի շրջանաւարտներուն մէջ որպէս լաւագոյն գործ, ներկայացուցած է համամիութենական մրցոյթի, որուն կը մասնակցէին Սովետական Միութեան այլ հանրապետութիւններու համազօր ուսանողական աւարտական այլ գործեր:

Գեղամ Թրայեան այս մրցոյթին կը հանդիսանայ առաջին եւ կը ստանայ ոսկեայ մետալ:

Իր ուսանողական տարիներուն ընտրուած է Սփիւռքահայ Ուսանողներու Խորհուրդին Նախագահ:

Հայրենիքի մէջ իր ուսումնառութեան տարիներուն հետեւած է արուեստի դասընթացքներու եւ հետագային սկսած է գեղեցիկ պաստառներ նկարել:

Եգիպտոսի մէջ մասնակցած է հայ նկարիչներու հաւաքական ցուցահանդէսներուն:

Գահիրէի ԶԲԸՄ-ին անդամակցած է 1985-ին եւ անոր վարչութեան անդամ ընտրուած՝ 1987-ին: 1989-1991 վարած է վարչութեան գանձապահի պաշտօնը:

«Տ»

